Digitally signed by GASPARYAN LUSINE 7809730103
Date: 2022.09.20 11:10:42 AMST

Թեմատիկ պլանավորում

Մայրենի 5-րդ դասարան

(տարեկան 238 ժամ, շաբաթական 7 դասաժամ)

| Թեմա | Նպատակ | Վերջնարդյունք |
|---|---|---|
| ՄԵՐ ԼԵԶՈՒՆ<br>Հնչյունաբանություն | Բացատրել, որ ՀՀ պետական լեզուն հայերենն է, և այն մեր մայրենի լեզուն է: Ծանոթացնել հայ գրող-բանաստեղծների՝ մայրենիի մասին գրած բանաստեղծություններին և ասույթներին, դրանց միջոցով ցույց տալ մեր լեզվի հարստությունն ու գեղեցկությունը և աշակերտին սիրելի դարձնել սեփական լեզուն: Ներկայացնել ծայրակապը՝ որպես բանաստեղծություն գրելու յուրահատուկ սկզբունք: Մատչելի կերպով բացատրել ստեղծագործության միտքն ու գաղափարը, հնարավորություն տալ աշակերտին սեփական բառերով արտահայտել լսածն ու հասկացածը: Ընկալելի դարձնել ձայնավորների և բաղաձայնների, տառի և հնչյունի, | Կարողանալ գիտակցել մայրենի լեզվի անփոխարինելի տեղը մարդու կյանքում, նաև նրա պահպանման գործում սեփական ես-ի կարևորումը:Անսխալ, հասկանալով ընթերցել, անգիր արտասանել չափածո հատվածներ, բացատրել անհասկանալի բառերն ու արտահայտությունները, հնարավորության դեպքում գտնել դրանց հոմանիշ և հականիշ տարբերակները: Լսել ուսուցչին, ընկերներին, հասկանալ ստեղծագործության միտքն ու բովանդակությունը և հաճույքով մասնակցել խմբային աշխատանքներին: Կարողանալ դասակարգել հայերենի հնչյունները, բանավոր խոսքում պահպանել դրանց ճիշտ արտասանությունը: Զանազանել ձայնավոր և բաղաձայն հնչյունները, տարբերել երկհնչյունը այլ հնչյունակապակցություններից: Բացատրել տառի և հնչյունի տարբերությունը, սահմանումներին համապատասխան բերել մեկ-երկու օրինակ: |

| | | | |
|---|---|---|---|
| | | երկհնչյունի և այլ հնչյունակապակցությունների տարբերությունները: | |

| Ժամ | Էջ | Դաս |
|---|---|---|
| 1/1 | | Նախորդ դասարանում անցածի կրկնություն |
| 1/1 | 3 | Մուտքի դաս: Զրույց մայրենիի մասին |
| 3/1 | 4, 5 | Ս. Կապուտիկյան, «Խոսք իմ որդուն»: Հնչյունաբանություն |
| 3/1 | 4, 5 | Ս. Կապուտիկյան, «Խոսք իմ որդուն»: Հնչյունաբանություն |
| 3/1 | 6, 7 | Ս. Կապուտիկյան, «Խոսք իմ որդուն»: Հնչյունաբանություն |
| 3/1 | 7, 8 | Ն. Զարյան, «Հայոց լեզուն»: Հայերենի հնչյունները և նրանց դասակարգումը: Ձայնավոր հնչյուններ |
| 3/1 | 7, 8 | Ն. Զարյան, «Հայոց լեզուն»: Հայերենի հնչյունները և նրանց դասակարգումը: Ձայնավոր հնչյուններ |
| 3/1 | 9 | Ն. Զարյան, «Հայոց լեզուն»: Հայերենի հնչյունները և նրանց դասակարգումը: Ձայնավոր հնչյուններ |
| 3/1 | 10, 11 | Ա. Բիտով, «Հայաստանի դասերը»: Բաղաձայն հնչյուններ: Եռաշարք, երկշարք և միաշարք բաղաձայններ |
| 3/1 | 11, 12 | Ա. Բիտով, «Հայաստանի դասերը»: Բաղաձայն հնչյուններ: Եռաշարք, երկշարք և միաշարք բաղաձայններ |
| 3/1 | 11, 12 | Ա. Բիտով, «Հայաստանի դասերը»: Բաղաձայն հնչյուններ: Եռաշարք, երկշարք և միաշարք բաղաձայններ: |
| 1/1 | | Թեմատիկ գրավոր աշխատանք 1 |
| 1/1 | | Գրավորի քննարկում, սխալների ուղղում |
| 1/1 | 13, 14 | Ասույթներ մեր մայրենի լեզվի մասին |
| 1/1 | 14 | Գործնական աշխատանք: Զեկուցումներ հայ նշանավոր գրողների մասին |
| 2/1 | 14 | Հայերենի երկհնչյունները |
| 2/1 | 14, 15 | Հայերենի երկհնչյունները: Ամրակայող վարժություններ |
| 3/1 | 16, 17 | Գ. Էմին, «Մեր այբուբենը» |
| 3/1 | 16, 17 | Գ. Էմին, «Մեր այբուբենը»-հատվածներ անգիր: Հայերենի այբուբենը: Հայոց տառերի թվային արժեքը |

| | | | |
|---|---|---|---|
| 3/1 | 18 | Գ. Էմին, «Մեր այբուբենը»: Հայերենի այբուբենը: Հայոց տառերի թվային արժեքը | |
| 1/1 | 19 | Տեքստի մասին | |
| 1/1 | 20 | Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ | |
| 1/1 | | Թեմատիկ գրավոր աշխատանք 2 | |
| 1/1 | | Գրավորի քննարկում  և սխալների ուղղում | |
| Թեմա | | Նպատակ | Վերջնարդյունք |
| ԵՐԿՆՔԻՑ ԵՐԵՔ ԽՆՁՈՐ ԸՆԿԱՎ<br>Ուղղագրություն և ուղղախոսություն | | Ծանոթացնել հեքիաթի տեսակներին և ժանրային առանձնահատկություններին, ձևավորել տեքստի ուսումնասիրման, միտքը տարբեր տիպի նախադասություններով արտահայտելու և հիմնական ու երկրորդական մտքերն առանձնացնելու կարողություն, հարստացնել բառապաշարը: Զարգացնել ընթերցելու, կարդացածը վերարտադրելու, խմբում աշխատելու կարողություններ: Ընկալելի կերպով բացատրել ձայնավորների, բաղաձայնների ու երկհնչյունների ուղղագրական և ուղղախոսական կանոնները: | Կարողանալ տարբերակել հեքիաթի տեսակները և ժանրային առանձնահատկությունները, արտահայտիչ և հասկանալով ընթերցել, տեքստում զատել գլխավորը երկրորդականից, կազմել գրագետ խոսք, վերարտադրել լսածն ու կարդացածը՝ պահպանելով դեպքերի տրամաբանական հաջորդականությունը: Ըմբռնել և յուրացնել ձայնավորների, բաղաձայնների և երկհնչյունների ուղղագրությունն ու ուղղախոսական կանոնները, հնարավորինս անսխալ գրել տարբեր բնույթի տեքստեր: |
| Ժամ | էջ | Դաս | |
| 7/1 | 22, 26 | «Ուրիշի համար փոս փորողը...» -1: Ուղղագրություն և | |

| | | |
|---|---|---|
| | | ուղղախոսություն |
| 7/1 | 23, 26 | «Ոլիկի համար փոս փորողը...» -2: Ուղղագրություն և ուղղախոսություն |
| 7/1 | 24, 26 | «Ոլիկի համար փոս փորողը...» -3: Է, Ե ձայնավորների ուղղագրությունը |
| 7/1 | 25, 26 | «Ոլիկի համար փոս փորողը...» -4: Է, Ե ձայնավորների ուղղագրությունը |
| 7/1 | 27 | «Ոլիկի համար փոս փորողը…»: Է, ե ձայնավորների ուղղագրությունը |
| 7/1 | 28, 29 | «Ոլիկի համար փոս փորողը...»: Է, Ե ձայնավորների ուղղագրությունը |
| 7/1 | 28, 29 | «Ոլիկի համար փոս փորողը...»: Է, Ե ձայնավորների ուղղախոսությունը |
| 6/1 | 29, 30, 31, 34 | Համառոտ թելադրություն: «Մուրացկանը և հարուստը» - 1 |
| 6/1 | 31, 32, 34 | «Մուրացկանը և հարուստը»- 2: Օ, Ո-ի ուղղագրությունը |
| 6/1 | 32-34 | «Մուրացկանը և հարուստը» -3: Օ, Ո-ի ուղղագրությունը |
| 6/1 | 35-36 | «Մուրացկանը և հարուստը»: Օ, Ո-ի ուղղագրությունը |
| 6/1 | 35-36 | «Մուրացկանը և հարուստը»: Օ, Ո-ի  ուղղագրությունը |
| 6/1 | 35-36 | «Մուրացկանը և հարուստը»: Օ, Ո-ի  ուղղագրությունը |
| 1/1 | 36 | Ամրակայող վարժություններ:  Համառոտ թելադրություն |
| 1/1 | 53 | Թեմատիկ գրավոր աշխատանք 3 |
| 1/1 | | Գրավորի քննարկում  և սխալների ուղղում |
| 6/1 | 37, 40 | Մ.Կորյուն,«Այգեպան Մոսին» -1: Ը-ի ուղղագրությունը |
| 6/1 | 38- 40 | Մ.Կորյուն,«Այգեպան Մոսին» -2: Ը-ի ուղղագրությունը |
| 6/1 | 41, 42 | Մ.Կորյուն,«Այգեպան Մոսին: Ը -ի ուղղագրությունը |
| 6/1 | 41, 42 | Մ.Կորյուն,«Այգեպան Մոսին: Ը-ի ուղղախոսությունը |
| 6/1 | 41, 42 | Մ.Կորյուն,«Այգեպան Մոսին: Ը -ի ուղղագրությունը և ուղղախոսությունը |
| 6/1 | 41, 42 | Մ.Կորյուն,«Այգեպան Մոսին: Ը -ի ուղղագրությունը և ուղղախոսությունը |
| 1/1 | 42 | Ամրակայող վարժություններ |

| | | |
|---|---|---|
| 6/1 | 43,44, 47 | Հովհ. Թումանյան, «Խոսող ձուկը» -1 |
| 6/1 | 44, 47 | Հովհ. Թումանյան, «Խոսող ձուկը»-2 |
| 6/1 | 45-47,48 | Հովհ. Թումանյան, «Խոսող ձուկը»-3: Յ ձայնակապի ուղղագրությունը |
| 6/1 | 48, 49 | Հովհ. Թումանյան, «Խոսող ձուկը»: Յ ձայնակապի ուղղագրությունը |
| 6/1 | 48, 49 | Հովհ. Թումանյան, «Խոսող ձուկը»: Յ ձայնակապի ուղղախոսությունը |
| 6/1 | 48, 49 | Հովհ. Թումանյան, «Խոսող ձուկը»: Յ ձայնակապի ուղղախոսությունը |
| 1/1 | 52 | Ամրակայող վարժություններ |
| 1/1 | 19 | Թեմատիկ գրավոր աշխատանք **4** |
| 1/1 | | Գրավորի քննարկում և սխալների ուղղում |
| 2/1 | 50 | Լեոնարդո դա Վինչի, «Կարապը» |
| 2/1 | 51 | Լեոնարդո դա Վինչի, «Կարապը»: Յա-Իա-Եա երկհնչյունների ուղղագրությունը և ուղղախոսությունը |
| 2/1 | 53 | Ույ-Յու երկհնչյունների ուղղագրությունը |
| 2/1 | 53-54 | Ամրակայող վարժություններ: Համառոտ թելադրություն |
| 2/1 | 54-55 | Ույ-Յո-Իո երկհնչյունների ուղղագրությունը |
| 2/1 | 55 | Ամրակայող վարժություններ |
| 1/1 | 61 | Թեմատիկ գրավոր աշխատանք **5** |
| 1/1 | | Գրավորի քննարկում և սխալների ուղղում |
| 7/1 | 56-57,63 | Ղ. Աղայան, «Եղեգնուհին» -1: Բ-Պ-Փ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 7/1 | 57-59,63 | Ղ. Աղայան, «Եղեգնուհին» - 2: Բ-Պ-Փ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 7/1 | 59-61, 64 | Ղ. Աղայան, «Եղեգնուհին» - 3: Բ-Պ-Փ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 7/1 | 61-64 | Ղ. Աղայան, «Եղեգնուհին» - 4 |
| 7/1 | | Ղ. Աղայան, «Եղեգնուհին» |
| 7/1 | | Ղ. Աղայան, «Եղեգնուհին» |

| | | |
|---|---|---|
| 7/1 | | Ղ. Աղայան, «Եղեգնուհին» |
| 6/1 | 66 -73 | Հ.Ք. Անդերսեն ,« Սոխակը»:<br>Գ-Կ-Ք բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 6/1 | 66- 73 | Հ.Ք. Անդերսեն, « Սոխակը»:<br>Գ-Կ-Ք բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 6/1 | 66- 73 | Հ.Ք. Անդերսեն ,« Սոխակը»:<br>Գ-Կ-Ք բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 6/1 | 66- 73 | Հ.Ք. Անդերսեն « Սոխակը»:<br>Գ-Կ-Ք բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 6/1 | 66- 73 | Հ.Ք. Անդերսեն « Սոխակը»:<br>Գ-Կ-Ք բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 6/1 | 66- 73 | Հ.Ք. Անդերսեն « Սոխակը»:<br>Գ-Կ-Ք բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 1/1 | | Ամրակայող վարժություններ |
| 1/1 | | Թեմատիկ գրավոր աշխատանք **6** |
| 1/1 | | Գրավոր աշխատանքի քննարկում, սխալների ուղղում |
| 5/1 | 74-80 | Է.Միլիտոնյան«Արդուկն ու մարդուկը»:<br>Դ-Տ-Թ  բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 5/1 | 74-80 | Է.Միլիտոնյան«Արդուկն ու մարդուկը»:<br>Դ-Տ-Թ  բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 5/1 | 74-80 | Է.Միլիտոնյան«Արդուկն ու մարդուկը»:<br>Դ-Տ-Թ  բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |

| | | |
|---|---|---|
| 5/1 | 74-80 | Է.Միլիտոնյան«Արդուկն ու մարդուկը»:<br>Դ-Տ-Թ  բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 5/1 | 74-80 | Է.Միլիտոնյան«Արդուկն ու մարդուկը»:<br>Դ-Տ-Թ  բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 6/1 | 81-89 | Ա.Իսահակյան, «Նուկիմ քաղաքի խելոքները»:<br>Ձ-Ծ-Ց և Ջ-Ճ-Չ  բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 6/1 | 81-89 | Ա.Իսահակյան, «Նուկիմ քաղաքի խելոքները»:<br>Ձ-Ծ-Ց և Ջ-Ճ-Չ  բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 6/1 | 81-89 | Ա.Իսահակյան, «Նուկիմ քաղաքի խելոքները»:<br>Ձ-Ծ-Ց և Ջ-Ճ-Չ  բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 6/1 | 81-89 | Ա.Իսահակյան, «Նուկիմ քաղաքի խելոքները»:<br>Ձ-Ծ-Ց և Ջ-Ճ-Չ  բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 6/1 | 81-89 | Ա.Իսահակյան, «Նուկիմ քաղաքի խելոքները»:<br>Ձ-Ծ-Ց և Ջ-Ճ-Չ  բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 6/1 | 81-89 | Ա.Իսահակյան, «Նուկիմ քաղաքի խելոքները»:<br>Ձ-Ծ-Ց և Ջ-Ճ-Չ  բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 1/1 | | Ամրակայող վարժություններ |
| 1/1 | | Թեմատիկ գրավոր աշխատանք **7** |
| 1/1 | | Գրավոր աշխատանքի քննարկում, սխալների ուղղում |
| 5/1 | 90-96 | Վ.Սարոյան, «Երեք Խորհուրդ»:<br>Ղ-Խ  բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 5/1 | 90-96 | Վ.Սարոյան, «Երեք Խորհուրդ»:<br>Ղ-Խ  բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |

| | | |
|---|---|---|
| 5/1 | 90-96 | Վ.Սարոյան, «Երեք Խորհուրդ»:<br>Ղ-Խ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 5/1 | 90-96 | Վ.Սարոյան, «Երեք Խորհուրդ»:<br>Ղ-Խ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 5/1 | | Վ.Սարոյան, «Երեք Խորհուրդ»:<br>Ղ-Խ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 2/1 | | **Գործնական աշխատանք** |
| | | Երկրորդ կիսամյակ |
| 5/1 | 97-104 | Է.Ավագյան, «Գարունածաղիկը»<br>Մ-Ն և Վ-Ֆ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 5/1 | 97-104 | Է.Ավագյան, «Գարունածաղիկը»:<br>Մ-Ն և Վ-Ֆ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 5/1 | 97-104 | Է.Ավագյան, «Գարունածաղիկը»:<br>Մ-Ն և Վ-Ֆ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 5/1 | 97-104 | Է.Ավագյան, «Գարունածաղիկը»:<br>Մ-Ն և Վ-Ֆ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 5/1 | | Է.Ավագյան, «Գարունածաղիկը»:<br>Մ-Ն և Վ-Ֆ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 3/1 | 105-110 | Ս.Վարդանյան « Թռիչք»:<br>Ր-Ռ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 3/1 | 105-110 | Ս.Վարդանյան « Թռիչք»:<br>Ր-Ռ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 3/1 | 105-110 | Ս.Վարդանյան « Թռիչք»:<br>Ր-Ռ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 1/1 | | Ամրակայող վարժություններ |

| | | |
|---|---|---|
| 1/1 | | Թեմատիկ գրավոր աշխատանք 8 |
| 1/1 | | Գրավորի քննարկում, սխալների ուղղում |
| 3/1 | 111-114 | Օ.Ուայլդ. «Աստղամանուկը»1-ին մաս:<br>Ձ-Մ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 3/1 | 111-114 | Օ.Ուայլդ. «Աստղամանուկը»1-ին մաս:<br>Ձ-Մ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 3/1 | 111-114 | Օ.Ուայլդ. «Աստղամանուկը»1-ին մաս:<br>Ձ-Մ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 2/1 | 115-118 | Օ.Ուայլդ. «Աստղամանուկը» 2-րդ մաս:<br>Ժ-Շ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 2/1 | 115-118 | Օ.Ուայլդ. «Աստղամանուկը»2-րդ մաս:<br>Ժ-Շ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 2/1 | 119- 123 | Օ.Ուայլդ. «Աստղամանուկը» 3-րդ մաս:<br>Հ բաղաձայնի ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 2/1 | 119-123 | Օ.Ուայլդ. «Աստղամանուկը» 3-րդ մաս:<br>Հ բաղաձայնի ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 3/1 | 124- 129 | Օ.Ուայլդ. «Աստղամանուկը» 4-րդ մաս:<br>ԵՎ/և/-ի ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 3/1 | 124- 129 | Օ.Ուայլդ. «Աստղամանուկը» 4-րդ մաս:<br>ԵՎ/և/-ի ուղղագրությունն ու ուղղախոսությունը |

| | | |
|---|---|---|
| 3/1 | 124- 129 | Օ.Ուայլդ. «Աստղամանուկը» 4-րդ մաս։<br>ԵՎ/և/-ի ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 5/1 | 130-137 | Ռ.Մարուխյան «Կախարդված տղան» ։<br>Կրկնակ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 5/1 | 130-137 | Ռ.Մարուխյան «Կախարդված տղան» ։<br>Կրկնակ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 5/1 | 130-137 | Ռ.Մարուխյան «Կախարդված տղան»։<br>Կրկնակ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 5/1 | 130-137 | Ռ.Մարուխյան «Կախարդված տղան»։<br>Կրկնակ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 5/1 | 130-137 | Ռ.Մարուխյան «Կախարդված տղան»։<br>Կրկնակ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| 1/1 | | Ամրակայող վարժություններ |
| 1/1 | | Թեմատիկ գրավոր աշխատանք 9 |
| 1/1 | | Գրավոր աշխատանքի քննարկում, սխալների ուղղում |
| 1/1 | | Թեմայի ամփոփում։ Հեքիաթի մասին |
| Թեմա | Նպատակ | Վերջնարդյունք |
| ԱՌԱԿՍ Ի՞ՆՉ ԿՑՈՒՑԱ ՆԵ | .ուսուցանել առակի ժանրային առանձնահատկությունները<br>.ընկալել տալ այլաբանությունը որպես գրական հնարք<br>.ձևավորել բարձր արժեհամակարգով | .տարբերել առակի ժանրային առանձնահատկությունները<br>.ընկալել այլաբանությունը<br>.նկարագրել, բնութագրել առակների հերոսներին<br>.ճանաչել հայ և օտարազգի նշանավոր առակագիրներին<br>.ինքնուրույն տեսակետ հայտնել ընթերցածի վերաբերյալ<br>.հորինել առակ՝ հաշվի առնելով ժանրային առանձնահատկությունները |

| | | |
|---|---|---|
| | ապրելու գիտակցում<br>.ուսուցանել վանկը և դրանով պայմանավորված շեշտադրությունն ու տողադարձը | |
| Ժամ | Էջ | Դաս |
| 2/1 | 141,142,143 | Վ.Այգեկցի «Առյուծն ու մարդը»:<br>Առակ.արձակ և չափածո առակներ |
| 2/1 | 142,143 | Վ.Այգեկցի «Առյուծն ու մարդը» |
| 3/1 | 144,145, 147 | Հ.Շիրազ «Մարգարիտն ու փրփուրը» : Վանկ |
| 3/1 | 144,145, 147 | Հ.Շիրազ «Մարգարիտն ու փրփուրը»: Վանկ |
| 3/1 | 144,145, 147 | Հ.Շիրազ «Մարգարիտն ու փրփուրը»: Վանկ |
| 1/1 | 148 | Ա. Խնկոյան <<Խխունջն ու սունկը>> |
| 1/1 | 149 | Մ. Գոշ <<Ուղտը և իր խնամողը>> |
| 2/1 | 150-151 | Եզոպոս <<Աղվեսն ու հովազը>>, <<Գայլերն ու ոչխարները>> |
| 2/1 | 150-151 | Եզոպոս <<Աղվեսն ու հովազը>>, <<Գայլերն ու ոչխարները>> |
| 1/1 | 152 | Եզոպոս <<Ուղևորներն ու սոսին>> |
| 3/1 | 153-155 | Ավ. Իսահակյան <<Կյանքից թանկ բանը>>: Տողադարձ |
| 3/1 | 153-155 | Առակի բարոյախոսական նշանակությունը: Տողադարձ |
| 3/1 | 153-155 | Առակի բովանդակությունը: Տողադարձ |
| 1/1 | | Ամրակայող վարժություններ |
| 1/1 | | Թեմատիկ գրավոր աշխատանք 10 |
| 1/1 | | Գրավոր աշխատանքի քննարկում, սխալների ուղղում |
| 2/1 | 157 | Իվան Կռիլով <<Տերևներն ու արմատները>>: Խոսքի զարգացում |
| 2/1 | 157 | Առակի բարոյախոսական նշանակություն |

| | | |
|---|---|---|
| 3/1 | 159 | Հիսուսի առակները <<Մարդը, որ ներել չէր ուզում>>: Խոսքի զարգացում |
| 3/1 | 159 | Առակի բարոյախոսական նշանակությունը, բովանդակությունը: |
| 3/1 | | Հիսուսի առակները |
| 1/1 | 162 | Թեմայի ամփոփում: Եզոպոս, «Գյուղացին և իր որդիները» |
| 2/1 | | Արտադասարանական ընթերցանություն |
| 2/1 | | Արտադասարանական ընթերցանություն |
| Թեմա | Նպատակ | Վերջնարդյունք |
| ԵՐԳ ՈՒ ՏԱՂ | .արձակ և չափածո գործերի հստակ տարանջատում .երգերի վերածված բանստեղծությունների հետ ծանոթացում .բառային և տրամաբանական շեշտերի իմացություն .հնչյունափոխության կանոնների ծանոթություն և իմացություն բանաստեղծության հանգի, ռիթմի և տան մասին գիտելիքների ծեռքբերում | .չափածո ստեղծագործության առանձնահատկությունների վերաշարադրում<br>.չափածո ստեղծագործության դրսևորման ձևերի իմացություն (երգ)<br>.բառային և տրամաբանական շեշտերի տարբերակումը բնագրում և դրանցից յուրաքանչյուրին բնորոշ առանձնահատկությունների կիրառությունը տեքստում<br>.հնչյունափոխության կանոնների անսխալ կիրառությունը, տեքստում հնչյունափոխված արմատների առանձնացումն ու դուրսբերումը, անհնչյունափոխ արմատի հնչյունափոխությունը բանաստեղծական տողերի դասավորությունն ու դրանց համապատասխան անվանումները |
| Ժամ | Էջ | Դաս |
| 3/1 | 166 | <<Ծնունդ Վահագնի>>: Խոսքի զարգացում |
| 3/1 | 166 | <<Ծնունդ Վահագնի>>: Բանաստեղծության կառուցվածքը, գաղափարը |
| 3/1 | | <<Ծնունդ Վահագնի>> |
| 3/1 | 167 | Ս. Շահազիզ <<Երազ>> |
| 3/1 | 168 | Ս. Շահազիզ <<Երազ>>: Շեշտ : Հայերենի շեշտի վերջնավանկային դիրքը |
| 3/1 | 168 | Ս. Շահազիզ <<Երազ>>: Բառային շեշտ |

| | | |
|---|---|---|
| 1/1 | | Ամրակայող վարժություններ |
| 1/1 | | Թեմատիկ գրավոր աշխատանք 11 |
| 1/1 | | Գրավորի քննարկում, սխալների ուղղում |
| 2/1 | 171, 172 | Ա.Պարսամյան « Մեր լավաշ հացը»:<br>Տրամաբանական շեշտ |
| 2/1 | 171, 172 | Ա.Պարսամյան « Մեր լավաշ հացը»:<br>Տրամաբանական շեշտ |
| 4/1 | 173, 174, 175 | Ա.Իսահակյան « Գետակի վրա»<br>Հնչյունափոխություն |
| 4/1 | 173, 174, 175 | Ա. Իսահակյան, «Գետակի վրա» |
| 4/1 | 173, 174, 175 | Ա. Իսահակյան, «Գետակի վրա» |
| 4/1 | 173, 174, 175 | Ա. Իսահակյան, «Գետակի վրա» |
| 4/1 | 176, 177 | Վ.Տերյան « Աշուն»<br>Է ձայնավորի հնչյունափոխությունը՝ կախված շեշտից |
| 4/1 | 176, 177 | Վ. Տերյան, «Աշուն» |
| 4/1 | 176, 177 | Վ. Տերյան, «Աշուն» |
| 4/1 | 176, 177 | Վ. Տերյան, «Աշուն» |
| 4/1 | 178, 179 | Հ.Շիրազ« Գարնանամուտ»<br>Ի ձայնավորի հնչյունափոխությունը |
| 4/1 | 178, 179 | Հ. Շիրազ, « Գարնանամուտ». Ի ձայնավորի հնչյունափոխությունը |
| 4/1 | 178, 179 | Հ. Շիրազ, «Գարնանամուտ». Ի ձայնավորի հնչյունափոխությունը |
| 4/1 | 178, 179 | Հ. Շիրազ, «Գարնանամուտ». Ի ձայնավորի հնչյունափոխությունը |
| 4/1 | 181, 182, 183 | Գ.Սարյան « Կարոտ»<br>Ու ձայնավորի հնչյունափոխությունը |
| 4/1 | 181, 182, 183 | Գ. Սարյան, «Կարոտ» |
| 4/1 | 181. 182, 183 | Գ. Սարյան, «Կարոտ» |

| | | |
|---|---|---|
| 4/1 | 181, 182, 183 | Գ.Սարյան, «Կարոտ» |
| 3/1 | 184, 185 | Հ.Սահյան « Արագիլները»<br>Ը ձայնավորի հնչյունափոխությունը |
| 3/1 | 184, 185 | Հ.Սահյան, «Արագիլներ». Ը ձայնավորի հնչյունափոխությունը |
| 3/1 | 184, 185 | Հ.Սահյան, «Արագիլներ». Ը ձայնավորի հնչյունափոխությունը |
| 1/1 | | Ամրակայող վարժություններ |
| 1/1 | | Թեմատիկ գրավոր աշխատանք 12 |
| 1/1 | | Գրավորի քննարկում, սխալների ուղղում |
| 4/1 | 186, 187, 188 | Ս.Մարգարյան « Այդ քամին է քո»<br>ՅԱ, ՈւՅ, ՅՈւ երկհնչյունների հնչյունափոխությունը |
| 4/1 | 186, 187, 188 | Ս. Մարգարյան, «Այդ քամին է քո» |
| 4/1 | 186, 187, 188 | Ս.Մարգարյան, «Այդ քամին է քո» |
| 4/1 | 186, 187, 188 | Ս. Մարգարյան, «Այդ քամին է քո» |
| 2/1 | 189, 190 | Վ.Դավթյան « Գյուղի առավոտ»<br>Հանգ և ռիթմ |
| 2/1 | 189, 190 | Վ.Դավթյան, «Գյուղի առավոտը» |
| 2/1 | 190, 191 | Պ.Սևակ « Ջրերի լեզուն»<br>Բանաստեղծական տուն |
| 2/1 | 190, 191 | Պ.Սևակ « Ջրերի լեզուն» |
| 1/1 | | Ամրակայող վարժություններ |
| 1/1 | | Թեմատիկ գրավոր աշխատանք 13 |
| 1/1 | | Գրավոր աշխատանքի քննարկում , սխալների ուղղում |
| 1/1 | | Թեմայի ամփոփում: Բանաստեղծության մասին |
| 2/1 | | Արտադասարանական ընթերցանություն |
| 2/1 | | Արտադասարանական ընթերցանություն |
| Թեմա | Նպատակ | Վերջնարդյունք |
| ՆԱՄԱԿ | .ընկալել տալ նամակն իբրև հաղորդակցման | .իմանալ նամակի կառուցվածքը |

| | | |
|---|---|---|
| | ձև<br>.սովորեցնել նամակի կառուցվածքը<br>.ձևավորել վերաբերմունք հայտնի մարդկանց տարբերվող, խորիմաստ նամակների հանդեպ<br>.հայտնի մարդկանց նամակները դարձնել ուսանելի<br>.ուսուցանել կոչականը և դրա կետադրությունը | .կիրառել նամակագրությունն իբրև հաղորդակցման եղանակ<br>.համեմատել նամակագրության հին ու նոր եղանակները, կապել ժամանակի փոփոխության հետ<br>.կիրառել նամակագրության հին ու ժամանակակից եղանակները<br>.ընթերցել հայտնի մարդկանց նամակները<br>.տարբերել կոչականը և ճիշտ կետադրել |
| Ժամ | Էջ | Դաս |
| 6/1 | 194-197 | Ռ.Քիփլինգ «Թե ինչպես գրվեց առաջին նամակը» |
| 6/1 | 194-197 | Ռ.Քիփլինգ «Թե ինչպես գրվեց առաջին նամակը» |
| 6/1 | 194-197 | Ռ.Քիփլինգ «Թե ինչպես գրվեց առաջին նամակը» |
| 6/1 | 194- 199 | Ռ.Քիփլինգ « Թե ինչպես գրվեց առաջին նամակը»<br>Կոչական.շարադասությունը, կետադրությունը, հնչերանգը |
| 6/1 | 194- 199 | Ռ.Քիփլինգ «Թե ինչպես գրվեց առաջին նամակը»<br>Կոչական.շարադասությունը, կետադրությունը, հնչերանգը |
| 6/1 | 194- 199 | Ռ.Քիփլինգ «Թե ինչպես գրվեց առաջին նամակը»<br>Կոչական. շարադասությունը, կետադրությունը, հնչերանգը |
| 1/1 | | Ամրակայող վարժություններ |

| | | |
|---|---|---|
| 1/1 | | Թեմատիկ գրավոր աշխատանք 14 |
| 1/1 | | Գրավորի քննարկում, սխալների ուղղում |
| 2/1 | | Արտադասարանական ընթերցանություն |
| 2/1 | | Արտադասարանական ընթերցանություն |
| 5/1 | 201-207 | Նամակ. կառուցվածքը՝սկիզբ,միջնամաս, ավարտ։<br>Նշանավոր մարդկանց նամակներն իրենց զավակներին |
| 5/1 | 201-207 | Նամակ. կառուցվածքը՝սկիզբ,միջնամաս, ավարտ։<br>Նշանավոր մարդկանց նամակներն իրենց զավակներին |
| 5/1 | 201-207 | Նամակ. կառուցվածքը՝սկիզբ,միջնամաս, ավարտ։<br>Նշանավոր մարդկանց նամակներն իրենց զավակներին |
| 5/1 | 201-207 | Նամակ. կառուցվածքը՝սկիզբ,միջնամաս, ավարտ։<br>Նշանավոր մարդկանց նամակները իրենց զավակներին |
| 5/1 | 201-207 | Նամակ. կառուցվածքը՝ սկիզբ,միջնամաս, ավարտ։<br>Նշանավոր մարդկանց նամակները |
| 4/1 | 208-211 | «Հայրենի անտառներ» (ըստ Մ.Ղուկասյանի)։ Պարզ և բարդ նախադասություն |
| 4/1 | 208-211 | «Հայրենի անտառներ» (ըստ Մ.Ղուկասյանի)։ Պարզ և բարդ նախադասություն |
| 4/1 | 208-211 | «Հայրենի անտառներ» (ըստ Մ.Ղուկասյանի)։ Պարզ և բարդ նախադասություն |
| 4/1 | 208-211 | «Հայրենի անտառներ» (ըստ Մ.Ղուկասյանի)։ Բառ-նախադասություն |
| 1/1 | | Ամրակայող վարժություններ |
| 1/1 | | **Գործնական աշխատանք** |
| 1/1 | | Գրավոր աշխատանքի քննարկում, սխալների ուղղում |
| 4/1 | 214, 215, 216 | Ալիսիա Կիրակոսյան «Նամակ առ Հայաստան»։<br>Նամակի տեսակներն ըստ բովանդակության |
| 4/1 | 214, 217 | Ալիսիա Կիրակոսյան «Նամակ առ Հայաստան»<br>Նամակի տեսակներն ըստ բովանդակության |
| 4/1 | 214, 217 | Ալիսիա Կիրակոսյան «Նամակ առ Հայաստան» |

| | | |
|---|---|---|
| | | Նամակի տեսակներն ըստ բովանդակության |
| 4/1 | 217 | Ալիսիա Կիրակոսյան «Նամակ առ Հայաստան»<br><br>Նամակի տեսակներն ըստ բովանդակության |
| 1/1 | | Ամփոփիչ դասաժամ |
| 2/1 | | Արտադասարանական ընթերցանություն |
| 2/1 | | Արտադասարանական ընթերցանություն |
| 4/1 | | Կրկնություն(Ձայնավորների ուղղագրությունը) |
| 4/1 | | Կրկնություն(Երկհնչյունների ուղղագրությունը) |
| 4/1 | | Կրկնություն (Բաղաձայնների ուղղագրությունը) |
| 4/1 | | Կրկնություն(Վանկ, տողադարձ, պարզ և բարդ նախադասություններ ) |
| 1/1 | | Կրկնություն |
| 1/1 | | Կիսամյակի ամփոփում |

Դաս 1- Մուտքի դաս: Զրույց մայրենիի մասին Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչո՞ւ է լեզուն կոչվում մայրենի:
2. Ովքե՞ր են խոսում մեր մայրենիի մասին:
3. Ո՞րն է ՀՀ պետական լեզուն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Երեխան առաջին բառերը լսում և սովորում է մորից:
2. Մեր մայրենի լեզվի մասին խոսում են մանուկները, բանաստեղծները, գիտնականները:
3. ՀՀ պետական լեզուն հայերենն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. բացատրել, թե ինչու է լեզուն կոչվում մայրենի,
2. հիշել բանաստեղծների կամ գիտնականի խոսքը մայրենի լեզվի մասին,
3. ըմբռնել պետական լեզվի կարևորությունն ու առաջնայնությունը:

Դաս 2 - Ս. Կապուտիկյանի «Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞վ է բանաստեղծության հեղինակը:
2. Ի՞նչ է նշանակում պատգամ:
3. Որի՞ հետ կմիացնես մայր բառը.
   գրիչ, թուղթ, լեզու:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բանաստեղծության հեղինակը Ս. Կապուտիկյանն է:
2. Պատգամ նշանակում է պատվեր:
3. Մայր + լեզու → մայր լեզու

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հասկանալով կարդալ բանաստեղծությունը և ասել՝ ո՛վ է հեղինակը,
2. տեղադրել բաց թողնված բառը.
   Լսի՛ր, որդի՛ս, ............. որպես
   Սիրող քո մոր խոսքը սրտանց....
3. տրված բառերով բառակապակցություն կազմել:

Դաս 3 - Ս. Կապուտիկյանի «Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը    Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Հնարավո՞ր է, որ մարդ մոռանա իր մորը և լեզուն:
2. Ի՞նչ է պատվիրում մայրը որդուն:
3. Բացատրել աճյուն , մրմնջալ  բառերի իմաստները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մարդ ոչ մի դեպքում չպետք է մոռանա իր մորը և լեզուն:
2. Մայրը որդուն պատվիրում է  պահպանել ու պաշտպանել մայրենի լեզուն:
3. Աճյուն - դիակ , մրմնջալ-մեղմ ձայնով խոսել, ինքնիրեն քթի տակ խոսել

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հասկանալ, որ նաև իր առջև է դրված մայրենի լեզվի պահպանության հարցը,
2. արտասանել բանաստեղծական համապատասխան տողերն անգիր.
   Պահի՛ր նրան բարձր ու վճիտ,
   Արարատի սուրբ ձյունի պես,
   Պահի՛ր նրան սրտիդ մոտիկ,
   Քո պապերի աճյունի պես:
   Ու ոսոխի զարկիցը սև
   Դու պաշտպանի՛ր կրծքով նրան,
   Ինչպես մորդ կպաշտպանես,
   Թե սուր քաշեն մորդ վրա:
   Ու տե՛ս, որդի՛ս, ո՛ւր էլ լինես,
   Այս լուսնի տակ ո՛ւր էլ գնաս,
   Թե մո՛րդ անգամ մտքից հանես,
   Քո մայր լեզուն չմոռանաս:
3. բացատրել կարմիր գրված բառերի նշանակությունը:

Դաս 4 - Հնչյունաբանություն                                   Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Քանի՞ հնչյուն ունի  հայերենը։
2. Ի՞նչ է հնչյունը՝ ձա՞յն, թե՞ գիր։
3. Քանի՞ հնչյուն կա  գիրք  բառում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հայերենն ունի 36 հնչյուն։
2. Հնչյունը ձայն է։
3. Գիրք  բառում կա 4 հնչյուն։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել հայերենի տառերի և հնչունների քանակը,
2. տարբերել հնչյունը տառից,
3. հաշվել բառում եղած հնչյունները։

Դաս 5 - Ն. Զարյան «Հայոց լեզուն» [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞վ է գրել «Հայոց լեզուն» բանաստեղծությունը:
2. Կարդա՛ և փորձիր բացատրել՝ ի՛նչ է նշանակում փառաբանել :
3. Ո՞մ են անվանում Քերթողահայր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. «Հայոց լեզուն» բանաստեղծությունը գրել է Ն. Զարյանը:
2. Փառաբանել նշանակում է գովաբանել, մեծարել:
3. Քերթողահայր անվանում են Մ. Խորենացուն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել բանաստեղծության հեղինակին,
2. բարձրաձայն և անսխալ ընթերցել բանաստեղծությունը՝ կենտրոնանալով հիմնական ասելիքի վրա,
3. ուշադրություն դարձնել կարմիր գրված բառերին:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Քանի՞ տողանոց տներից է կազմված բանաստեղծությունը:
2. Ո՞ր արտահայտությունն է հաճախակի կրկնվում :
3. Լրացրո՛ւ բաց թողնված բառերը.

   Արի՛, եղբա՛յր, ……. մեր քաղցրաբառ հայոց լեզուն,

   Մեր սրտի ջուր, մեր ձեռքի թուր, մեր….. հայոց լեզուն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բանաստեղծությունը կազմված է 2 տողանոց տներից:
2. Բանաստեղծության մեջ հաճախակի կրկնվում է «Հայոց լեզուն» արտահայտությունը:
3. Արի՛, եղբա՛յր, փառաբանենք մեր քաղցրաբառ հայոց լեզուն,

   Մեր սրտի ջուր, մեր ձեռքի թուր, մեր հոգու լար հայոց լեզուն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հասկանալ, որ բանաստեղծական տները որոշ դեպքերում կազմվում են նաև 2 տողերից,
2. նկատել կրկնվող արտահայտությունները և հասկանալ՝ ինչու՛ է դա արվում,
3. անգիր արտասանել բանաստեղծության որոշ հատվածներ:

Դաս 7 – Հայերենի հնչյունները և նրանց դասակարգումը: Ձայնավոր հնչյուններ
Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Քանի՞ տեսակի հնչյուններ կան հայերենում:
2. Արդյո՞ք հայերենի բոլոր հնչյուններն են արտասանվում միատեսակ:
3. Ի՞նչ թվեր կդնես բաց թողնված տեղերում:

   Հայերենում կա ... ձայնավոր, որոնք գրվում են ... տառով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հայերենում կան ձայնավոր և բաղաձայն հնչյուններ:
2. Հայերենի բոլոր հնչյունները միատեսակ չեն արտասանվում:
3. Հայերենում կա 6 ձայնավոր, որոնք գրվում են 8 տառով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. թվարկել հայերենի ձայնավորները,
2. ասել, որ ձայնավորների արտասանության ժամանակ ձայնը գալիս է ազատ, առանց արգելքների,
3. ասել, թե ո՛ր ձայնավորներն են գրվում 2 տառով:

Դաս 8 - Ա. Բիտով, «Հայաստանի դասերը» [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞վ է գրել «Հայաստանի դասերը»:
2. Հնարավո՞ր է, որ մարդ սիրի նաև օտար լեզու:
3. Ի՞նչն է հեղինակին դուր եկել հայոց լեզվում և ինչու՞:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. «Հայաստանի դասերը» գրել է Անդրեյ Բիտովը:
2. Մարդիկ կարող են սիրել որևէ օտար լեզու և անհրաժեշտության դեպքում խոսել նրանով:
3. Հեղինակին դուր են եկել հայերեն մի շարք բառեր, որոնք առաջացնում են յուրահատուկ զգացողություններ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել ստեղծագործության հեղինակի անունը,
2. ասել, թե ո՛ր օտար լեզուն է ինքը սիրում և ինչո՛ւ,
3. թվարկել հեղինակին դուր եկած հայերեն բառերը և ասել, թե ինչու՛ են դրանք սիրելի:

Դաս 9 - Բաղաձայն հնչյուններ : Եռաշարք, երկշարք և միաշարք բաղաձայններ

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Հայերենում քանի՞ բաղաձայն հնչյուն կա։
2. Ինչպե՞ս են արտաբերվում բաղաձայն հնչյունները։
3. Քանի՞ բաղաձայն կա տրված շարքում ՝ ա, լ, կ, ի, զ, պ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հայերենում կա 30 բաղաձայն։
2. Բաղաձայն հնչյուններն արտաբերվում են կարճ և արգելքներով։
3. Տրված շարքի բաղաձայնները չորսն են՝ լ, կ, զ, պ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. իմանալ հայերենի բաղաձայն հնչյունների քանակը,
2. բնութագրել բաղաձայն հնչյունները,
3. շարքից առանձնացնել ձայնավոր և բաղաձայն հնչյունները։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞ր հայ բանաստեղծներն ու գրողներն են խոսել մայրենի լեզվի մասին:
2. Ի՞նչ է ասել Ավ. Իսահակյանը մայրենիի մասին:
3. Ի՞նչ է նշանակում զգվել :

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մայրենի լեզվի մասին խոսել են Հովհ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Ղ. Աղայանը, Վ. Տերյանը և Նար-Դոսը:
2. Ավ. Իսահակյանն ասել է.«Մայրենի լեզվի բառերը մենք զգում ենք, ապրում, իսկ օտար լեզվինը՝ հասկանում, սովորում, հիշում»:
3. Գզվել նշանակում է քնքշությամբ դիպչել, փաղաքշել :

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել մայրենի լեզվի մասին խոսք ասող գրողների և բանաստեղծների անունները,
2. անգիր ասել Իսահակյանի խոսքերը մայրենի լեզվի մասին,
3. իր բառերով շարադրել Ղ. Աղայանի ասույթը և բացատրել նրանում տեղ գտած գզվել բառը:

Դաս 11 - Գործնական աշխատանք: Զեկուցումներ հայ նշանավոր գրողների մասին

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞րտեղից կարելի է գրողի կամ բանաստեղծի մասին տեղեկություններ դուրս գրել:
2. Ինչի՞ կամ ո՞ւմ մասին է համացանցից իր դուրս գրած հատվածը:
3. Պարզել, թե է՞լ որտեղից կարելի է տեղեկություն հավաքել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Գրողի կամ բանաստեղծի մասին տեղեկություններ կարելի է դուրս գրել համացանցից:
2. Համացանցից դուրս գրած հատվածի բովանդակությունը:
3. Այն ամենը, ինչ ինքը տեսել է համացանցում, կարող է լինել նաև հանրագիտարանում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. մտնել համացանց և տեղեկություն հավաքել,
2. վերարտադրել իր բերած տեղեկության բովանդակությունը,
3. հանրագիտարանից լրացուցիչ տեղեկություն դուրս գրել նույն հեղինակի մասին:

Դաս 12 – Հայերենի երկհնչյունները [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Որո՞նք են հայերենի երկհնչյունները:
2. Քանի՞ հնչյուն է պարունակում երկհնչյունը:
3. Ո՞ր տառն է բաց թողնված .

   Երկհնչյունի մեջ պարտադիր առկա է … կիսաձայնը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հայերենի երկհնչյուններն են՝ այ, յա, ույ, յու, ոյ, յո և այլն:
2. Երկհնչյունը պարունակում է 2 հնչյուն:
3. Երկհնչյունի մեջ պարտադիր առկա է յ կիսաձայնը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. երկհնչյուն պարունակող բառեր թվել,
2. հասկանալ, որ ամեն 2 հնչյուն դեռևս երկհնչյուն չէ,
3. հասկանալ, որ առանց կիսաձայն յ-ի երկհնչյուն չի կազմվում:

Դաս 13 - Գ. Էմին, «Մեր այբուբենը» [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞վ է գրել «Մեր այբուբենը» բանաստեղծությունը:
2. Ի՞նչն է գովերգում հեղինակը բանաստեղծության մեջ:
3. Տրված նախադասության մեջ որո՞նք են երկհնչյուն ունեցող բառերը.

   Այբուբեն չէ սա,

   Բերդ է անմատույց,

   Գանձ է աննված:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. «Մեր այբուբենը» բանաստեղծությունը գրել է Գ. Էմինը:
2. Հեղինակը բանաստեղծության մեջ գովերգում է հայոց այբուբենը:
3. Տրված նախադասության մեջ երկհնչյուն ունեցող բառերն են՝ այբուբեն, անմատույց:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել ստեղծագործության հեղինակին,
2. ասել, թե ինչի մասին է բանաստեղծությունը,
3. տեքստից առանձնացնել երկհնչյուն ունեցող բառերը:

Դաս 14 - Գ. Էմին, «Մեր այբուբենը» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է բովանդակում բանաստեղծության առաջին 6 տողը:
2. Ըստ կազմության՝ ինչպիսի՞ բառ է այբուբենը և քանի՞ մասից է կազմված:
3. Գիտե՞ս, որ չինարին սոսի ծառն է: Ուրիշ ի՞նչ ծառեր գիտես:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բանաստեղծության առաջին 6 տողը անգիր:
2. Այբուբենը բարդ բառ է և կազմված է 3 մասից՝ այբ, ու, բեն :
3. Ծառեր են բարդին, սոսին, կաղնին և այլն :

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. արտահայտիչ կերպով անգիր արտասանել բանաստեղծության առաջին հատվածը,
2. բացատրել այբուբեն բառի կազմությունը և առանձնացնել արմատները,
3. կարողանա թվել ծառերի մի քանի տեսակներ:

Դաս 15 - Հայերենի այբուբենը: Հայոց տառերի թվային արժեքը [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ ես հասկանում այբուբեն ասելով:
2. Քանի՞ տառ և հնչյուն կա հայերենում:
3. Որո՞նք են Ա-ից Թ տառերի թվային արժեքները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Այբուբենը տվյալ լեզվի տառերի ամբողջությունն է:
2. Հայերենում կա 36 հնչյուն, 39 տառ:
3. Ա-1, Բ-2, Գ-3, Դ-4,Ե-5, Զ-6, Է-7, Ը-8, Թ-9

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. բացատրել՝ ինչ է այբուբենը,
2. ճշգրիտ ասել հայերենի տառերի և հնչյունների քանակը,
3. հիշել տառերի թվային արժեքը մինչև Թ տառը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է տեքստը:
2. Ի՞նչ կարող է ունենալ տեքստը:
3. Քանի՞ տեսակ են լինում տեքստերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մեկ նյութի մասին պատմող մի քանի նախադասությունը կոչվում է տեքստ:
2. Տեքստը կարող է ունենալ վերնագիր:
3. Տեքստերը լինում են արձակ և չափածո:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. կապել նախադասությունները և կազմել տեքստ,
2. վերնագրել պատրաստի կամ իր կազմած տեքստը,
3. տարբերակել արձակ և չափածո շարադրանքները:

Դաս 17 - «Ուրիշի համար փոս փորողը...» -1 [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ հայտնի բառերով է սկսվում հեքիաթը:
2. Ի՞նչ է նշանակում ձրիակեր :
3. Ո՞ր բառերն են համապատասխանում մեծ եղբորը.

   հոգատար, եսասեր , անխիղճ, բարի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հեքիաթն սկսվում է «Լինում է, չի լինում» բառերով:
2. Ձրիակեր նշանակում է ուրիշի հաշվին ապրող :
3. Մեծ եղբայրը եսասեր էր ու անխիղճ :

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել, որ հեքիաթներն սկսվում են հատուկ բառերով ու արտահայտություններով,
2. բացատրել կարմիր գրված բառերից 1-2-ը,
3. անսխալ կարդալ տեքստը և բնութագրել հերոսներին:

Դաս 18 -  «Ուրիշի համար փոս փորողը…» -2        Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է նշանակում սիրտը հովանալ ։
2. Ո՞ր բառը կտեղադրես.

   «Գնա, էլ ետ չգա, գազանների….. դառնա»:

   ա. բույն, բ.ժանիք, գ. բաժին, դ.մագիլ
3. Ո՞ւմ խոսքերն են .«Վայ քո տունը քանդվի, ախպե՛ր, ինձ ու՞ր ուղարկեցիր, հիմի գազանները կգան, ինձ կուտեն »:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Սիրտը հովանալ նշանակում է  սիրտը հանգստանալ, վրեժի ծարավը հագեցնել  ։
2. «Գնա, էլ ետ չգա, գազանների  բաժին  դառնա»:
3. Փոքր եղբոր խոսքերն են:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. կապույտով նշված գոնե մեկ դարձվածք բացատրել,
2. նախադասությանը համապատասխան ճիշտ բառ ընտրել,
3. անսխալ կարդալ և  վերարտադրել հերոսների խոսքերը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ են նշանակում լեղաճաք լինել և աշխարհով մեկ լինել դարձվածքները:
2. Ինչու՞ էր տխուր մուկը:
3. Ո՞ր բառն է բնութագրում փոքր եղբորը.

   ազնիվ, խաբեբա, դանդաղաշարժ, աշխատասեր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Լեղաճաք լինել - սարսափելի վախենալ

   աշխարհով մեկ լինել- շատ ուրախանալ
2. Մուկը տխուր էր, որովհետև սոված էր:
3. Փոքր եղբայրը ազնիվ էր ու աշխատասեր :

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. բացատրել 1-2 դարձվածք,
2. անսխալ կարդալ տեքստը և վերարտադրել մկան խոսքը,
3. անսխալ կարդալ տեքստը և վերարտադրել փոքր եղբոր ազնվությունը ցույց տվող հատվածը:

Դաս 20 - «Ուրիշի համար փոս փորողը…» - 4 Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է նշանակում ականջ դնել :
2. Հեքիաթի վերջում ի՞նչ է լինում մեծ եղբորը:
3. Խմբում քննարկիր.«Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի մեջը»:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ականջ դնել - լսել
2. Մեծ եղբայրը դառնում է գազանների բաժին:
3. Երբեք ոչ մեկին վատը մի՛ կամեցիր. դրա տասնապատիկը գլխիդ կգա:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. բացատրել հեքիաթի պարզագույն դարձվածքները,
2. անսխալ կարդալ և վերարտադրել հեքիաթի հատվածները,
3. մասնակցել խմբային աշխատանքին,հասկանալ հեքիաթի միտքը, բուն գաղափարը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է ուղղագրությունը:
2. Գրելիս պարտավո՞ր ենք հետևել որոշակի կանոնների:
3. Հայերենում կա՞ն բառեր, որ գրում ենք այնպես, ինչպես լսում ենք.

   ա. այո բ. ոչ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ուղղագրությունը բառերի ճիշտ գրությունն է:
2. Գրելիս պարտավոր ենք հետևել որոշակի կանոնների:
3. Այո՛, հայերենում կան բառեր, որոնք գրում ենք այնպես, ինչպես լսում ենք:Օր.՝ մատիտ, դարակ, կարմիր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հասկանալ, որ հայերենի ոչ բոլոր բառերի գրությունն է համապատասխանում արտասանությանը,
2. պատկերացնել՝ ինչ է ուղղագրական կանոնը,
3. տարբերել գրության և արտասանության տարբերություն ունեցող և չունեցող բառերը և բերել 1-2 օրինակ:

Դաս 22 – Է, Ե  ձայնավորների ուղղագրությունը            Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ տառով է գրվում  բառասկզբի է  հնչյունը:
2. Ի՞նչ ենք գրում բառասկզբում  յէ  լսելիս:
3. Բառամիջում և բառավերջում ե՞րբ է գրվում  է :

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բառասկզբի է  հնչյունը գրվում է է  տառով: Օր.՝ էգ, էշ:
2. Բառասկզբում  յէ  լսելիս գրում ենք ե: Օր.՝ երգ, երազ:
3. Բառամիջում և բառավերջում գրվում է է , եթե արմատի սկզբնատառ է: Օր.՝անէանալ, մանրէ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. թվարկել և ճիշտ գրել է-ով սկսվող բառերը,
2. հիշել, որ բառասկզբի ե-ից առաջ յ  չի գրվում,
3. ասել կանոնը և բերել գոնե մեկ օրինակ:

Դաս 23 – Է, Ե-ի ուղղախոսությունը                    Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ինչպե՞ս է կարդացվում  բառամիջի  և- ը:
2. Ի՞նչ է կարդացվում  ե-ն  կ  և չ  մասնիկներից հետո:
3. Բարձրաձայն կարդա  ծովեզր, բազմերանգ  բառերը և ասա՝ բառամիջի  ե –ն ի՞նչ ենք կարդում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բառամիջի և-ը կարդացվում է  էվ : Օր.՝ կարևոր:
2. Կ  և չ մասնիկներից հետո ե-ն արտասանվում  է  յէ : Օր.՝ կերգեմ, չենթարկվել:
3. Ծովեզր  և  բազմերանգ  բառերում  բառամիջի  ե –ն  արտասանվում է  է :

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ասել կանոնը և բերել  համապատասխան օրինակներ,
2. ասել կանոնը և բերել համապատասխան օրինակներ,
3. ճիշտ կարդալ բառերը և բացատրել ուղղախոսական կանոնը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ովքե՞ր են հեքիաթի գլխավոր հերոսները:
2. Ի՞նչ է նշանակում գլխի ընկնել :
3. Ո՞րն է մեծատուն բառի հոմանիշը.

   աղքատ, հարուստ, երաժիշտ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հեքիաթի գլխավոր հերոսներն են մուրացկանը և հարուստը:
2. Գլխի ընկնել նշանակում է կռահել, հասկանալ:
3. Մեծատուն բառի հոմանիշն է հարուստ :

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. անսխալ կարդալ տեքստը և թվել հեքիաթի հերոսներին,
2. բացատրել տեքստի ՝ կապույտ գրված արտահայտությունը՝ գլխի ընկնել,
3. կարողանալ գտնել տրված բառի հոմանիշը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ինչպե՞ս է վարվում մեծահարուստը աղքատի հետ:
2. Ի՞նչ է նշանակում սառած մնալ :
3. Ըստ հեքիաթի՝ ո՞ր բառը կտեղադրես.

   Ողջ գիշերն անցկացնում է ...... հեծկլտալով:

   ծածուկ, մեղմ, աղիողորմ :

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մեծահարուստը գողանում է մուրացկանի կճուճները :
2. Սառած մնալ նշանակում է ապշել, շվարել, կարկամել:
3. Ողջ գիշերն անցկացնում է աղիողորմ հեծկլտալով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. պատմել հեքիաթի 2-րդ մասի համապատասխան հատվածը,
2. հասկանալ արտահայտության իմաստը և ընթերցել համապատասխան հատվածը,
3. հիշել հեքիաթում տեղ գտած համապատասխան բառը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ինչի՞ց է աղքատն իմանում, որ հենց հարուստն է գողացել իր փողերը:
2. Ի՞նչ է նշանակում միտք անել :
3. Ի՞նչ որոշում է կայացնում թագավորը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կերակուրը կուլ չէր գնում, ինչից էլ աղքատն իմանում է, որ իր փողերով է հարուստը դա գնել:
2. Միտք անել նշանակում է մտածել:
3. Թագավորը որոշում է, որ աղքատի փողերը հարուստին կմնան, որովհետև նա չի կարողանում դրանք վայելել, իսկ հարուստը դրանցով բարիք կստեղծի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. պատմողաբար մեջբերումներ կատարել,
2. բացատրել տրված արտահայտության իմաստը,
3. կարդալ համապատասխան հատվածը և սեփական կարծիք հայտնել թագավորի կայացրած որոշման մասին:

Դաս 27 – Օ, Ո-ի ուղղագրությունը [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Բառասկզբի o հնչունը ո՞ր տառով է գրվում և ի՞նչ բացառություն ունենք:
2. Ե՞րբ է բառամիջում գրվում o :
3. Ինչու՞ է վոլտ, վոկալ, վոլեյբոլ բառերում ո-ից առաջ գրվում վ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բառասկզբի o հնչյունը գրվում է o տառով: Օր.՝ օգուտ: Բացառություն են կազմում ով, ովքեր բառերը:
2. Բառամիջում գրվում է o, եթե մեկ այլ բառի սկզբնատառ է: Օր.՝ կեսօր:
3. Վոլտ, վոկալ, վոլեյբոլ բառերում ո-ից առաջ գրվում վ , որովհետև օտարազգի բառեր են:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ասել ուղղագրական կանոնը և բերել համապատասխան օրինակներ,
2. հասկանալ, որ մեկ այլ բառ ասվածը արմատ է, որն սկսվում է o տառով, ու բերել օրինակներ,
3. բացատրել, թե ինչու Վոլտ, վոկալ, վոլեյբոլ բառերում ո-ից առաջ գրվում է վ:

Դաս 28 – Օ, Ո-ի ուղղախոսությունը                    [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է արտասանվում ո տառը բաղաձայնից հետո:
2. Ի՞նչ է արտասանվում ո տառը ձայնավորից հետո:
3. Ո՞ր 2 մասնիկներից հետո է ո տառն արտասանվում վօ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ո տառը բաղաձայնից հետո արտասանվում է օ : Օր.՝ անորակ:
2. Ո տառը ձայնավորից հետո արտասանվում է վօ : Օր.՝ արջառօս:
3. Կ և չ մասնիկներից հետո ո տառն արտասանվում է վօ: Օր.՝ կորոշեմ, չոգևորվել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել կանոնները և ճիշտ կարդալ տրված բառերը.
   անորակ, ութոտնուկ, արագոտն ,
2. հիշել կանոնները և ճիշտ կարդալ տրված բառերը.
   հնաոճ, արջառոս, ամենաորակյալ ,
3. հիշել կանոնները և ճիշտ կարդալ տրված բառերը.
   կորղնի, չորոնել, չորոշել :

Դաս 29 - Մ.Կորյուն, «Այգեպան Մոսին» -1 Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ո՞վ է հեքիաթի հեղինակը:

2. Ի՞նչ են նշանակում փիրուզե, ճախրել բառերը:

3. Ինչպիսի՞ն է Մոսու այգին :

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հեքիաթը գրել է Մկրտիչ Կորյունը:

2. Փիրուզե նշանակում է կապույտ, կապտականաչ ,

Ճախրել-սավառնել, թռչել, թևածել :

3.Մոսու այգում գետերն են սլանում, ինչպես արծաթաբաշ նժույգներ, մարդիկ ապրում են գոհ ու երջանիկ, այնտեղ չկան որբեր, սով ու կարիք:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ասել, թե ով է հեքիաթի հեղինակը,

2. բացատրել կարմիր գրված բառերից գոնե 2-ը,

3. բարձրաձայն և անսխալ ընթերցել տեքստը և վերարտադրել:

Դաս 30 - Մ.Կորյուն, «Այգեպան Մոսին» -2 [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ տեսիլքներ են երևում թագավորի աչքին:
2. Ի՞նչ են նշանակում տեսիլք, վտարել և նսեմացնել բառերը:
3. Քո կարծիքով պարտադի՞ր է, որ մարդ իր խոսքի տերը լինի(խմբային աշխատանք):

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Թագավորի աչքին 2 տեսիլք է երևում.

   ա. դարավոր կաղնի՝ արմատներն ամուր թաղած հողի մեջ:

   բ. իր դեմ ուղղված բահերի մի ամբողջ անտառ:
2. Տեսիլք -երազ, ոչ իրական պատկեր

   վտարել-վռնդել, դուրս անել

   նսեմացնել-ստորացնել, արժեզրկել
3. Պարտադիր է, որ մարդ իր խոսքի տերը լինի.դա ազնիվ մարդու հատկանիշ է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. բարձրաձայն և անսխալ կարդալ դասը և վերապատմել՝ պահպանելով դեպքերի տրամաբանական հաջորդականությունը,
2. բացատրել կարմիր գրված բառերը,
3. աշխատել խմբում, կարծիքներ լսել, հայտնել սեփականը և հիմնավորել:

Դաս 31– Ը-ի ուղղագրությունը [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞ր տառերից առաջ է բառասկզբում գրվում ը :
2. Ե՞րբ է բառամիջում գրվում ը :
3. Ո՞ր բառերում կտեղադրես ը .

   մարտ...նչել, գործ...նկեր, դառ..., սփ...րթնել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բառասկզբում ը գրվում է ղ , մ, ն տառերից առաջ: Օր.՝ ըղձալ, ըմպել, ընկնել:
2. Բառամիջում գրվում է ը , եթե մեկ այլ բառի՝ արմատի սկզբնատառ է: Օր.՝ դասընկեր, չընդունել:
3. Ը –ով են գրվում գործընկեր և դառը բառերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել, թե բառասկզբում ո՛ր տառերից առաջ է գրվում ը և բերել օրինակներ,
2. ասել բառամիջում ը գրելու կանոնը և բերել օրինակներ,
3. սովորած կանոններին համապատասխան՝ ճիշտ տեղադրել ը տառը:

Դաս 32 – Ը –ի ուղղախոսությունը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ինչպե՞ս է լսվում ը-ն զբ, զգ, շտ, սթ, սկ և նման այլ հնչյունակապակցություններից առաջ:
2. Արդյո՞ք զբ, զգ, շտ, սթ, սկ հնչյունակապակցություններից առաջ լսվող թույլ ը-ն գրվում է:
3. Ինչպե՞ս կդասավորես բառերն աղյուսակում:Կարդա՛ բարձրաձայն, հետո լրացրո՛ւ:

ստել, ստանալ, շտկել, զբաղվել

| բառի սկզբում թույլ ը կա | ը-ն առաջին հնչյունից հետո է լսվում |
|---|---|
| | |

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ը-ն զբ, զգ, շտ, սթ, սկ և նման այլ հնչյունակապակցություններից առաջ շատ թույլ է արտասանվում:
2. Զբ, զգ, շտ, սթ, սկ հնչյունակապակցություններից առաջ լսվող թույլ ը-ն չի գրվում :
3.

| բառի սկզբում թույլ ը կա | ը-ն առաջին հնչյունից հետո է լսվում |
|---|---|
| ստանալ, զբաղվել | ստել, շտկել |

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել ը-ին վերաբերող ուղղախոսական կանոնները,
2. հիշել ը-ի ուղղախոսության հետ կապված ուղղագրական կանոնները,
3. ճիշտ լրացնել աղյուսակը:

Դաս 33 - Հովհ. Թումանյան, «Խոսող ձուկը» -1 [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞վ է հեքիաթի հեղինակը:
2. Ինչի՞ մասին է հեքիաթի առաջին մասը:
3. Ի՞նչ են նշանակում՝ շալակտար, ուռկան բառերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հեքիաթի հեղինակը Հովհ. Թումանյանն է:
2. Հեքիաթի առաջին մասը ձկնորսի, շալակտարի ու նրա բռնած ձկան մասին է:
3. Շալակտար- բեռնակիր
   ուռկան- ձուկ բռնելու ցանց

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. մտապահել հեքիաթի հեղինակի անունը,
2. անսխալ կարդալ դասը և վերարտադրել,
3. բացատրել կարմիր գրված բառերից երկուսը:

Դաս 34 - Հովի. Թումանյան, «Խոսող ձուկը»-2 [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ինչի՞ մասին է հեքիաթի 2-րդ մասը:
2. Բացատրի՛ր միտք անել, մի դուռ կբացվի արտահայտությունները:
3. Արդյո՞ք աղքատը ճիշտ վարվեց՝ ընդունելով հրեշի առաջարկը (խմբային աշխատանք):

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հեքիաթի 2-րդ մասը աղքատի ու հրեշի հանդիպման և նրանց պայմանավորվածության մասին է:
2. Միտք անել -մտածել
   մի դուռ կբացվի - մի ելք կգտնվի
3. Աղքատը ճիշտ վարվեց, որ համաձայնվեց.ոնց էլ լիներ՝ մի դուռ կբացվեր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. անսխալ կարդալ և պատմել՝ պահպանելով դեպքերի տրամաբանական հաջորդականությունը,
2. բացատրել կապույտ գրված արտահայտությունների իմաստը,
3. լսել և կարևորել խմբի յուրաքանչյուր անդամի կարծիքը՝ արտահայտելով նաև սեփականը:

Դաս 35 - Հովհ. Թումանյան, «Խոսող ձուկը»-3 Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ինչի՞ մասին է հեքիաթի 3-րդ մասը:
2. Ի՞նչ են նշանակում՝ զարհուրելի, պախրա, աշխարհով մեկ լինել բառերն ու արտահայտությունը:
3. Բացատրի՛ր լավություն արա ու ջո՛ւրը գցիր ասացվածքի իմաստը(խմբային):

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հեքիաթի 3-րդ մասն ամբողջացնում է հեքիաթի բովանդակությունը և արտահայտում գլխավոր միտքը:
2. Զարհուրելի - սարսափազդու, վախենալու
   խախրա -վայրի այծ
   աշխարհով մեկ լինել - սաստիկ ուրախանալ
3. Լավությո՛ւն արա ու ջո՛ւրը գցիր- Անշահախնդիր լավություն արա, մի օր քեզ կվերադառնա- կյանքի օրենքն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. անսխալ կարդալ և պատմել՝ պահպանելով դեպքերի տրամաբանական հաջորդականությունը,
2. բացատրել բառերի ու դարձվածքների իմաստները,
3. լսել խմբի մյուս անդամներին՝ կենտրոնանալով հիմնական ասելիքի վրա: Հասկանալ տեքստում նկարագրված իրադարձությունների միջև եղած կապերը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ե՞րբ է յ-ն կոչվում ձայնակապ:
2. Ի՞նչ է կազմում կիսաձայն յ-ն , երբ միանում է որևէ ձայնավորի:
3. Ո՞ր ձայնավորներից հետո է գրվում յ ձայնակապը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Յ-ն ձայնակապ է կոչվում, երբ կապում է իրար հաջորդող երկու ձայնավոր: Օր.՝ երեկոյան, ամառային:
2. Յ կիսաձայնը կազմում է երկհնչյուն, երբ միանում է որևէ ձայնավորի: Օր.՝ վայրի, գույն:
3. Յ ձայնակապը գրվում է միայն ա և ո ձայնավորներից հետո: Օր.՝ նայել, երեկոյան, խաղայի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. սահմանել՝ ո՛րն է կոչվում ձայնակապ: Բերել օրինակներ,
2. հիշել, որ յ-ն նաև կիսաձայն է և կազմում է երկհնչյուններ: Բերել օրինակներ,
3. անգիր հիշել, որ յ ձայնակապը գրվում է ա և ո ձայնավորներից հետո: Բերել օրինակներ:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞րն է ճիշտ պատասխանը.

   ա. Յ ձայնակապը լսվում և գրվում է գրեթե բոլոր ձայնավորների միջև

   բ. Յ ձայնակապը լսվում է գրեթե բոլոր ձայնավորների միջև, սակայն գրվում է միայն ա-ից և ո-ից հետո:

2. Ո՞ր ձայնավորներից հետո յ-ն չի գրվում, բայց արտասանվում է:
3. Ո՞ր բառերում յ-ն չի արտասանվում և չի գրվում.

   Աիդա, երեկոյան, ձմեռային, պոեմ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Յ ձայնակապը լսվում է գրեթե բոլոր ձայնավորների միջև, սակայն գրվում է միայն ա-ից և ո-ից հետո:
2. Յ-ն չի գրվում, բայց արտասանվում է ե, ի, ու ձայնավորներից հետո: Օր.՝ գրեի, Անիի, վերարկուի,
3. Յ-ն չի արտասանվում և չի գրվում Աիդա, պոեմ բառերում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ընտրել ճիշտ պատասխանը, հիշել, որ յ ձայնակապը գրվում է միայն ա և ո ձայնավորներից հետո,
2. հիշե՛լ, թե ո՛ր ձայնավորներից հետո յ-ն չի գրվում, բայց արտասավում է: Բերել օրինակներ,
3. բառաշարքից դուրս բերել այն բառերը, որոնցում յ-ն չի արտասանվում և չի գրվում:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞վ է գրել «Կարապը» զրույցը:
2. Ինչի՞ մասին է զրույցը:
3. Ո՞ր բառերի մեջ է յ-ն ձայնակապ.

   նայել, դյուրաթեք, վայելչագեղ, երեկոյան

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. «Կարապը» զրույցը գրել է Լեոնարդո դա Վինչին, որը իտալացի հայտնի նկարիչ է:
2. Զրույցը ծերացած կարապի մասին է, որը մեռնելուց առաջ երգում էր:
3. Յ-ն ձայնակապ է նայել, վայելչագեղ, երեկոյան բառերում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել ստեղծագործության հեղինակի անունը, ազգությունը, և թե ինչո՛վ է նա առավել հայտնի մարդկությանը,
2. կարդալ տեքստը և որոշ հատվածներ վերարտադրելով՝ պատասխանել հարցերին,
3. շարքից առանձնացնել ձայնակապ ունեցող բառերը:

Դաս 39 - Յա-Իա-Եա երկհնչյունների ուղղագրությունը և ուղղախոսությունը

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Յա երկհնչյունի գրության և արտասանության ի՞նչ կանոն գիտես, որ վերաբերում է անձնանուններին, աշխարհագրական անուններին և օտար բառերին:
2. Ի՞նչ բառեր գիտես, որոնցում յա երկհնչյունը գրվում է եա :
3. Ի՞նչ տառեր կամ երկհնչյուն կտեղադրես.

   դաստ...րակ, կր..., Ամալ..., օվկ...նոս, Անդր...աս

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Յա երկհնչյունը գրվում է իա տառերով մի շարք անձնանուններում, աշխարհագրական անուններում և օտար բառերում: Օր.՝ Մարիամ, Սուքիաս, Իտալիա, էներգիա:
2. Հրեա, իդեալ բառերում յա երկհնչյունը գրվում է եա տառերով:
3. Դաստիարակ, կրիա, Ամալյա, օվկիանոս, Անդրեաս

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. կարողանա ձևակերպել յա երկհնչյունին վերաբերող կանոնները և բերել օրինակներ,
2. հիշել բառեր, որոնցում յա երկհնչյունը գրվում է եա տառերով,
3. ճիշտ լրացնել բառերում բաց թողնված տառերն ու երկհնչյունները, անսխալ գրել թեմային վերաբերող թելադրություններ:

Դաս 40 - Ույ-Յու երկհնչյունների ուղղագրությունը և ուղղախոսությունը
Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ջյութ, զգույշ, աշխույժ, կապույտ բառերը կարդալիս ինչի՞ց պետք է խուսափել:
2. Ո՞ր բառերում է հանդիպում ույ-յու երկհնչունների աղավաղված արտասանություն:
3. Ինչի՞ց պետք է զգուշանալ սյունակ, աղյուսակ, պայուսակ բառերն արտասանելիս:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ջյութ, զգույշ, աշխույժ, կապույտ բառերը կարդալիս պետք է խուսափել երկհնչյունի պարզեցված արտասանությունից:
2. Ույ-Յու երկհնչունների աղավաղված արտասանություն հանդիպում է համբույր, դաշույն, առյուծ բառերում:
3. Սյունակ, աղյուսակ, պայուսակ բառերն արտասանելիս պետք է զգուշանալ ավելորդ յ ներմուծելուց:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ճիշտ արտասանել և գրել ույ-յու երկհնչուն ունեցող բառերը,
2. համբույր, դաշույն, առյուծ բառերն արտասանելիս և գրելիս չաղավաղել երկհնչյունը,
3. հիշել, որ սյունակ, աղյուսակ, պայուսակ բառերում 2-րդ յ գոյություն չունի:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ ենք գրում բառերում օյ երկհնչյունը լսելիս:
2. Յո երկհնչյունն ինչպե՞ս կարող է գրվել :
3. Ի՞նչ երկհնչյուններ կտեղադրես.

   Միլ-ոն, արդ-ք, օր-րդ, տասն-թ, թ-րեմ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բառերում օյ երկհնչյունը լսելիս գրում ենք ոյ : Օր.՝ Նոյ, խոյ, հոբոյ:
2. Յո երկհնչյունը կարող է գրվել իո և եո տառերով: Օր.՝ ռադիո, միլիոն, թեորեմ, քամելեոն:
3. Միլիոն, արդյոք, օրիորդ, տասնյոթ, թեորեմ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ասել, թե ինչ տառերով է գրվում օյ երկհնչյունը և բերել օրինակներ,
2. ասել, թե ինչ տառերով կարող է գրվել յո երկհնչյունը և բերել օրինակներ,
3. ճիշտ լրացնել բաց թողնված երկհնչյունները, անսխալ գրել թեմային վերաբերող թելադրություններ:

Դաս 42 - Ղ. Աղայան, «Եղեգնուհին» -1 [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞վ է գրել «Եղեգնուհին» հեքիաթը:
2. Ինչի՞ մասն է հեքիաթի 1-ին մասը:
3. Ի՞նչ են նշանակում՝ ջուրը ձգել, աղախին :

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. «Եղեգնուհին» հեքիաթը գրել է Ղ. Աղայանը:
2. Հեքիաթի 1-ին մասը պատմում է , թե ինչպես մի թագավոր իր մինուճար որդուն ուզում է ամուսնացնել և աշխարհեաշխարհ ընկնելով՝ աղջիկ է փնտրում ու լսում է իրեն պատահած ծերունու խորհուրդը:
3. ջուրը ձգել – գցել ջրի մեջ, աղախին - սպասուհի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հիշել, թե ով է ստեղծագործության հեղինակը:
2. Բարձրաձայն ընթերցել տեքստի 1-ին հատվածը և պատմել՝ կենտրոնանալով առանձին բառերի ու արտահայտությունների վրա:
3. Բացատրել կարմիր գրված բառերն ու արտահայտությունները:

Դաս 43 - Ղ. Աղայան, «Եղեգնուհին» -2 Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ինչպե՞ս վարվեց խափշիկը եղեգնուտի աղջկա հետ , որպեսզի գրավի նրա տեղը:
2. Մտատանջություն-սրտնեղություն, չքնաղ-աննման բառազույգերը հոմանիշնե՞ր են, թե՞ հականիշներ:
3. Բացատրի՛ր խափշիկ, նաժիշտ, ուռկան բառերի իմաստները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Խափշիկը , տեսնելով Եղեգնուհու միամտությունը, առաջարկում է աղջկան դուրս գալ ջրից, որից հետո խեղդում է նրան: Հետագայում բազում ստոր միջոցների է դիմում՝ ճշմարտությունը կոծկելու համար:
2. Մտատանջություն-սրտնեղություն, չքնաղ-աննման բառազույգերը հոմանիշներ են:
3. Խափշիկ-սևամորթ, նաժիշտ-սպասուհի, աղախին, ուռկան-ձուկ բռնելու ցանց

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. բարձրաձայն ընթերցել տեքստի 2-րդ հատվածը և պատմել՝ հասկանալով տեքստում նկարագրված իրադարձությունների միջև առկա կապը,
2. տարբերել հոմանիշը հականիշից,
3. բացատրել կարմիր գրված բառերի իմաստները:

Դաս 44 - Ղ. Աղայան, «Եղեգնուհին» -3 [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Վերածնված Եղեգնուհին ի՞նչ գործեր է կատարում աղքատ պառավի տանը:
2. Եղեգնուհու առաջարկով ու՞մ հետ պիտի արքայազնը հյուր գար պառավին:
3. Բացատրել բղուղ և կանուխ բառերի իմաստները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Վերածնված Եղեգնուհին պառավի տանն զբաղված էր տունը կարգի բերելով, կար ու ձև անելով:
2. Եղեգնուհու առաջարկով արքայազնը պառավին հյուր պետք է գար իր ծնողների ու նորահարսի հետ:
3. Բղուղ -լայն, փոքր կավե աման, կանուխ - շուտ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. կարդալ և պատմել հեքիաթի 3-րդ հատվածը և հասկանալ բովանդակությունը,
2. հիշել դեպքերի ու իրադարձությունների առանցքային պահերը,
3. բացատրել կարմիր գրված բառերի նշանակությունը,

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ ճակատագիր ունեցան Եղեգնուհին և խափշիկը:

2. Ի՞նչ ես հասկանում «Խոսելիս բերանից մարգարիտ էր թափվում» ասելով:

3. Գտի՛ր շուտ, ծերունի, սև, շոգ, խրճիթ բառերի հականիշները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Եղեգնուհին իր արժանիքների համար արժանացավ փառքի, իսկ խափշիկը դաժանորեն պատժվեց, որովհետև չար էր, ստոր և խաբեբա:
2. «Խոսելիս բերանից մարգարիտ էր թափվում» ասելով հասկանում ենք, որ մարդու խոսքն այնքան գեղեցիկ ու հաճելի է, որ բոլորն ուզում են անվերջ նրան լսել:
3. Շուտ-ուշ, ծերունի-ջահել, երիտասարդ, շոգ-հով, զով, խրճիթ-պալատ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. բարձրաձայն և անսխալ ընթերցել տեքստը ու պատմել՝ հասկանալով բովանդակությունը, իրադարձությունների պատճառահետևանքային կապերը,
2. բացատրել դարձվածային արտահայտությունները,
3. գտնել տրված բառերի հականիշները:

Դաս 46- Հ.Ք.Անդերսեն, « Սոխակը» [Թեմատիկ պլանավորում]

Գ-Կ-Ք բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչպիսի՞ն էր Չինաստանի կայսեր ապարանքը՝ գեղեցի՞կ, թե՞ տգեղ։

2. Մինչև ապարանք գալը որտե՞ղ էր ապրում սոխակը։

3. Ինչո՞վ էր սոխակը զարմացնում մարդկանց՝ երգելո՞վ, թե՞ ցատկելով։

4. Ի՞նչ բառերով կլրացնես շարքը՝ կապուտակ ծով ,_________ծառ,__________ծաղիկ։

5. Ո՞ր շարքի բոլոր բառերն են գրվում գ-ով.

ա) եր_, ավա_, շո_

բ) վեր_, կարա_,թա_ուն

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կայսեր ապարանքը գեղեցիկ էր։

2. Մինչև ապարանք գալը սոխակն ապրում էր անտառում։

3. Սոխակը մարդկանց զարմացնում էր իր երգով։

4. Ծառը կարող է լինել կանաչ,բերքառատ,չորացած,հաստաբուն և այլն, ծաղիկը կարող է լինել ծաղկած,հոտավետ,կարմիր,թոշնած և այլն։

5.Գ-ով գրվում են առաջին շարքի բառերը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տրամաբանորեն պատասխանել հարցին,

2. վերարտադրել հեքիաթի բովանդակությունը,

3. վերարտադրել կարդացածը,

4. նկարագրել ծառն ու ծաղիկը,

5. ճիշտ գրել գ,ք-ի ուղղագրության բառերը։

Դաս 47- Հ.Ք.Անդերսեն, « Սոխակը» [Թեմատիկ պլանավորում]

Գ-Կ-Ք բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Կայսրը հավանու՞մ էր սոխակի երգը, թե՞ ոչ:

2. Կայսրը որտե՞ղ էր պահում սոխակին՝ այգու՞մ,թե՞ վանդակում:

3. Մեծ փաթեթով ի՞նչ նվեր բերեցին կայսերը:

4. Նշվածներից ո՞րն է կայսր բառի հոմանիշը՝ կոշկակար,այգեպան,արքա:

5. Ի՞նչ նոր բառեր կկազմես թագ բառով:





Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կայսրը  հավանում էր սոխակի երգը:

2. Սոխակին պահում էին վանդակում:

3. Կայսրը նվեր ստացավ արհեստական սոխակ:

4. Կայսր բառի հոմանիշը արքան է:

5. Կկազմվեն թագավոր, թագուհի և այլ բառեր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. պատմել կարդացածը,

2. վերարտադրել հեքիաթի բովանդակությունը,

3. վերարտադրել կարդացածը,

4.տարբերել հոմանիշ բառերը,

5. կազմել նոր բառեր:

Դաս 48- Հ.Ք.Անդերսեն, « Սոխակը» [Թեմատիկ պլանավորում]

Գ-Կ-Ք բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչերո՞վ էր զարդարված արհեստական սոխակը՝ թանկարժեք քարերո՞վ, թե՞ ծաղիկներով։

2. Ինչպե՞ս էր երգում արհեստական սոխակը։

3. Երկու սոխակները միասին կարողացա՞ն երգել, թե՞ ոչ։

4. Նշվածներից ո՞րն է ապարանք բառի հականիշը՝ պալա՞տը, թե՞ խրճիթը։

5. Ի՞նչ ընդհանուր բառ կա երգչուհի, երգեհոն, երգարան բառերում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Արհեստական սոխակը զարդարված էր թանկարժեք քարերով։

2.Արհեստական սոխակը երգում էր լարելով։

3. Երկու սոխակները միասին չկարողացան երգել։

4.Ապարանք բառի հականիշը խրճիթն է։

5. Ընդհանուր բառը երգն է ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ վերարտադրել հեքիաթի բովանդակությունը,

2. մտապահել կարևորը,

3. ներկայացնել դրվագը,

4. տարբերել հականիշները և հոմանիշները,

5. տարբերել բառերի ընդհանուր արմատները։

Դաս 49- Հ.Ք.Անդերսեն, « Սոխակը» [Թեմատիկ պլանավորում]

Գ-Կ-Ք բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ էին անում մարդիկ,երբ երգում էր սոխակը՝ արտասվու՞մ էին,թե՞ ծիծաղում։

2.Արհեստական սոխակի հայտնվելուց հետո ի՞նչ արեց սոխակը։

3. Արհեստական սոխակը երգելիս հոգնու՞մ էր, թե՞ ոչ ։

4.Քնել և արթնանալ բառերը հոմանիշնե՞ր են, թե՞ հականիշներ։

5.Նշված անուններում ո՞ր տառն է բաց թողած՝ գ, թե՞ ք.

Մար_արիտ, Տի_րան, Գարե_ին

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Սոխակի երգից մարդիկ արտասվում էին։

2. Սոխակը լքեց ապարանքը։

3. Արհեստական սոխակը երգելուց չէր հոգնում։

4. Քնել և արթնանալ բառերը հականիշներ են։

5. Նշված անձնանունները գրվում են գ-ով ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. վերարտադրել հեքիաթի բովանդակությունը,

2. բնութագրել հերոսների արարքները,

3. վերարտադրել կարդացածը,

4. տարբերել հականիշները և հոմանիշները,

5. Ճիշտ գրել անձնանունները։

Դաս 50- Հ.Ք.Անդերսեն, « Սոխակը» Թեմատիկ պլանավորում

Գ-Կ-Ք բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ պատահեց արհեստական սոխակին:

2. Արհեստական սոխակին կարողացա՞ն վերանորոգել, թե՞ ոչ:

3. Ի՞նչ վատ բան պատահեց կայսեր հետ:

4. Ի՞նչ նոր բառեր կկազմես՝ մայր+քաղաք, զույգ+երգ,օտար+երկրացի բառազույգերը միացնելով:

5.Նկարների օգնությամբ ինչպե՞ս կշարունակես շարքը՝ արհեստական սոխակ...





Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Արհեստական սոխակը փչացավ:

2. Արհեստական սոխակին մասամբ վերանորոգեցին, բայց առաջվա նման երգել չէր կարող:

3. Կայսրը հիվանդացավ:

4. Կկազմվեն մայրաքաղաք, զուգերգ, օտարերկրացի բառերը:

5. Շարքը կլրացվի դաշնամուր և ջութակ բառերով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. վերարտադրել հեքիաթի բովանդակությունը,

2. նկարագրել հերոսին,

3. վերարտադրել կարդացածը,

4. կազմել նոր բառեր,

5. տրամաբանորեն շարունակել բառաշարքը:

Դաս 51- Հ.Ք.Անդերսեն, « Սոխակը»                                    Թեմատիկ պլանավորում

Գ-Կ-Ք բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչպե՞ս առողջացավ կայսրը:

2. Սոխակը մնա՞ց պալատում, թե՞ ոչ:

3. Առավոտյան ծառաներին ինչպե՞ս ողջունեց կայսրը՝ ուրա՞խ ձայնով, թե՞ տխուր:

4. Ո՞ր տառն է բաց թողած՝ գ, թե՞ ք.

ուրա_          սա_          վա_ր







5.Հեքիաթի ո՞ր հատվածն է քեզ ամենից շատ դուր եկել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կայսրը առողջացավ սոխակի երգից:

2. Սոխակը չմնաց պալատում, կրկին հեռացավ անտառ:

3. Ուրախ ձայնով ողջունեց՝ ասելով. «Բարի լու՜յս»:

4. Բառերում բաց է թողած գ-ն:

5. Դուր է եկել որևէ հատված:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. վերարտադրել հեքիաթի բովանդակությունը,

2. մեկնաբանել հերոսների գործողությունները,

3. վերարտադրել կարդացածը,

4. ճիշտ գրել գ-ք ուղղագրական բառերը,

5. անկաշկանդ արտահայտվել:

Դաս 52- Է.Միլիտոնյան, «Արդուկն ու մարդուկը» [Թեմատիկ պլանավորում]

Դ-Տ-Թ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ է արդուկը՝ առարկա՞, թե՞ կենդանի:

2. Առաջին անգամ ի՞նչ արդուկեց արդուկը.

☐ գիրք ☐ մուկ ☐ ձուկ

3. Արդուկ և հարթուկ բառերը հոմանիշնե՞ր են, թե՞ հականիշներ:

4. Ո՞ր բառում է բաց թողած դ, և որո՞ւմ՝ թ.

որ_ որ_





Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Արդուկը առարկա է:

2. Առաջին անգամ արդուկեց մկանը:

3.Արդուկ և հարթուկ բառերը հոմանիշներ են:

4. Որթը/խաղողի վազ/գրվում է թ-ով, և որդը/ճիճու/՝ դ-ով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տրամաբանորեն պատասխանել հարցերին,

2. վերարտադրել հեքիաթի բովանդակությունը,

3. տարբերել հոմանիշներն ու հականշները,

4. ճիշտ գրել դ, թ-ի ուղղագրության բառերը:

Դաս 53- Է.Միլիտոնյան, «Արդուկն ու մարդուկը» [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Արդուկը կախարդակա՞ն էր, թե՞ իրական:

2. Մարդուկը կարողացա՞վ արդուկել հսկա ծառը, թե՞ ոչ:

3. Մարդուկն իրականո՞ւմ էր խելքը կորցրել:

4. Նկարների օգնությամբ ինչպե՞ս կլրացնես խաչբառը, որ ստանաս որդ բառը.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | | Ո | | |
| 2. | | Ր | | |
| 3. | | Դ | | |

3.



2.




1.



Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Արդուկը կախարդական էր:

2. Արդուկեց հսկա ծառը:

3. «Խելքը կորցրել» արտահայտությունը գործածված է փոխաբերական իմաստով:

4. Խաչբառի բառերն են՝ արդուկ, մարդ, սղոց:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տրամաբանորեն պատասխանել հարցերին,

2. վերարտադրել հեքիաթի բովանդակությունը,

3. տարբերել ուղիղ և փոխաբերական իմաստները,

4.պատկերներն արտահայտել բառերով:

Դաս 54- Է.Միլիտոնյան, «Արդուկն ու մարդուկը» [Թեմատիկ պլանավորում]

Դ-Տ-Թ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1.Նշվածներից է՞լ ինչ արդուկեց մարդուկը՝ առյուծ,վագր,պայուսակ,սար,բլուր,դաշնամուր։

2.Արդուկը բնությունը գեղեցկացնու՞մ էր, թե՞ տգեղացնում։

3. Ո՞րն է տարեց մարդու հականիշը.

- ☐ ծեր մարդ
- ☐ երիտասարդ մարդ

4.Ո՞ր շարքի բոլոր բառերն են սխալ գրված.

ա) արթուկ, մարթուկ, օթ

բ) արդար, վարդ, Վարդան

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մարդուկն արդուկեց՝ առյուծ, վագր, սար, բլուր։

2.Մարդուկն իր արդուկով տգեղացնում և փչացնում էր բնությունը։

3.Տարեց մարդու հականիշը երիտասարդ մարդն է։

4.Սխալ են գրված առաջին շարքի բառերը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. վերարտադրել հեքիաթի բովանդակությունը,

2. տրամաբանորեն պատասխանել հարցերին,

3. տարբերել բառերի հոմանիշներն ու հականիշները,

4.Ճիշտ գրել դ,թ-ի ուղղագրության բառերը։

Դաս 55- Է.Միլիտոնյան, «Արդուկն ու մարդուկը» Թեմատիկ պլանավորում

Դ-Տ-Թ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1.Մարդուկը կարողացա՞վ արդուկել ծովը, թե՞ ոչ։

2. Ժողովուրդն ուրախանու՞մ էր մարդուկի արարքներից, թե՞ տխրում։

3. Ինչպիսի՞ն էր մարդուկը.

☐ խելացի ☐ բարի ☐չար

4.Ո՞ր տառն է բաց թողած.

o_անավ կար-ալ վար-







Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մարդուկը չկարողացավ արդուկել ծովը։

2.Ժողովուրդը տխրում էր մարդուկի արարքներից։

3.Մարդուկը չար էր։

4. Բաց է թողած դ տառը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. վերարտադրել հեքիաթի բովանդակությունը,

2. մեկնաբանել բովանդակության որոշ դրվագներ,

3. տրամաբանորեն պատասխանել հարցին,

4.Ճիշտ գրել դ,թ-ի ուղղագրության բառերը։

Դաս 56- Է.Միլիտոնյան, «Արդուկն ու մարդուկը» Թեմատիկ պլանավորում

Դ-Տ-Թ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Արդուկը պատժվե՞ց, թե՞ ոչ։

2. Ո՞վ պատժեց արդուկին։

3. Հեքիաթի ո՞ր հատվածը քեզ դուր եկավ։

4. Ո՞ր տառն է բաց թողած նշված անձնանուններում՝ դ, թե՞ թ.

Վար_ան, Նվար_, Վար_գես ,Վար_ուհի

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մարդուկն ի վերջո պատժվեց։

2. Մարդուկին պատժեց ծովը։

3. Դուր է գալիս որևէ հատված։

4. Բաց է թողած դ տառը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. վերարտադրել հեքիաթի բովանդակությունը,

2. մեկնաբանել բովանդակության որոշ դրվագներ,

3. ներկայացնել զգացածը,

4. ճիշտ գրել անձնանունները։

Դաս 57- Ա.Իսահակյան, «Նուկիմ քաղաքի խելոքները» Թեմատիկ պլանավորում

Ձ-Ծ-Ց բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1.Ո՞վ է հեքիաթի հեղինակը:

2. Ինչի՞ց էին դժգոհ Նուկիմ քաղաքի բնակիչները:

3. Ու՞մ մոտ որոշեցին գնալ Նուկիմ քաղաքի խելոքները:

4.Ինչու՞ էին նրանք գնում թագավորի մոտ:

5.Ո՞րն է տաքղեղ բառի հոմանիշը.

☐ խնձոր ☐ պղպեղ ☐ աղջիկ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հեքիաթի հեղինակը Ավ. Իսահակյանն է:

2. Դժգոհ էին եղանակից:

3. Նրանք որոշեցին գնալ թագավորի մոտ:

4. Ուզում էին խնդրել երկու ամառ, մեկ ձմեռ:

5. Տաքղեղ բառի հոմանիշը պղպեղն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ճանաչել ստեղծագործության հեղինակին,

2. մեկնաբանել բովանդակության որոշ դրվագներ,

3. վերարտադրել կարդացածը,

4. ներկայացնել ստեղծագործության բովանդակությունը,

5. տարբերել բառերի հոմանիշները:

Դաս 58- Ա.Իսահակյան, «Նուկիմ քաղաքի խելոքները» Թեմատիկ պլանավորում

Ձ-Ծ-Ց բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Նրանք ի՞նչ էին նվեր տանում թագավորին:

2. Նրանց զնած պղպեղը քա՞ղցր էր, թե՞ կծու:

3. Ի՞նչ ընդհանուր բառ կա օձաձև, օձաձուկ, օձագալար բառերում:

4.Ո՞րն է ճանապարհ բառի հոմանիշը.

☐ սար ☐ ուղի ☐ գիրք

5.Ո՞ր տառն է բաց թողած՝ ձ, թե՞ ց.

օ_ դեղ_ դեր_ակ







Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Թագավորի համար տանում էին մի քսակ ոսկի:

2.Պղպեղը շատ կծու էր:

3. Ընդհանուր է օձ բառը:

4.Ճանապարհ բառի հոմանիշը ուղին է:

5.Գրվում է ձ տառը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել հետաքրքիր դրվագները,

2. մեկնաբանել որոշ դրվագներ,

3. տարբերել բառերի ընդհանուր արմատները,

4. տարբերել հոմանիշները,

5. ճիշտ գրել ձ,ց-ի ուղղագրության բառերը:

Դաս 59- Ա.Իսահակյան, «Նուկիմ քաղաքի խելոքները» Թեմատիկ պլանավորում

Ձ-Ծ-Ց բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ համեղ միրգ գնեցին նրանք ճանապարհից:

2. Նրանք առաջին անգա՞մ էին շաքար տեսնում:

3. Գիշերը նրանց ոսկիները գողացա՞ն, թե՞ ոչ:

4.Ո՞ր շարքի բոլոր բառերն են գրվում ց-ով.

ա) Ար_ախ, քաղ_ր, մր_ել

բ) օ_ , վար_, ղեղ_

5. Ո՞ր տառն է բաց թողած՝ ձ, թե՞ ց.

հա_ լվա_ք ցն_ուղ





Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Նրանք ճանապարհից խաղող գնեցին:

2.Նրանք առաջին անգամ էին շաքար տեսնում:

3.Գիշերը նրանց ոսկիները գողացան:

4.Ց-ով գրվում են առաջին շարքի բառերը:

5.Հաց, լվացք, ցնցուղ բառերում բաց է թողած ց-ն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել հետաքրքիր դրվագները,

2. մեկնաբանել որոշ դրվագներ,

3. վերարտադրել տեքստի որոշ դրվագներ,

4. ճիշտ գրել ձ,ց-ի ուղղագրության բառերը,

5.ճիշտ գրել ձ,ց-ի ուղղագրության բառերը:

Դաս 60- Ա.Իսահակյան, «Նուկիմ քաղաքի խելոքները»                    Թեմատիկ պլանավորում

Ձ-Ծ-Ց բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Նրանք տեսա՞ն թագավորին, թե՞ ոչ։

2. Ինչպե՞ս դիմավորեց նրանց թագավորը։

3. Ի՞նչ ընդհանուր բառ կա բարձրություն, բարձրանալ, բարձրակարգ բառերում։

4.Ո՞րն է ուրախ բառի հոմանիշը.

☐ խելոք ☐ զվարթ ☐ տխուր

5. Ո՞ր տառն է բաց թողած՝ ձ, թե՞ ց.

դաղ_ դեղ_ենի ար_ան

  

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Նրանք հանդիպեցին թագավորին։

2. Թագավորը փորձեց նրանց խելքը։

3. Ընդհանուր է բարձր բառը։

4. Ուրախ բառի հոմանիշը զվարթն է։

5. Կկազմվեն դաղձ, դեղձենի, արձան բառերը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել հետաքրքիր դրվագները,

2. մեկնաբանել որոշ դրվագներ,

3. տարբերել բառերի ընդհանուր արմատները,

4. տարբերել բառերի հոմանիշները,

5. ճիշտ գրել ձ,ց-ի ուղղագրության բառերը։

Դաս 61- Ա.Իսահակյան, «Նուկիմ քաղաքի խելոքները» [Թեմատիկ պլանավորում]

Ձ-Ծ-Ց բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1.Ի՞նչ հյուրասիրեց նրանց թագավորը։

2.Նրանք թագավորից գո՞հ հեռացան, թե՞ ոչ։

3.Եթե հնարավորություն ունենայիր, ի՞նչ կխնդրեիր թագավորից։

4.Ո՞րն է խելոք բառի հականիշը.

☐ ագեղ ☐ հիմար ☐ ուրախ

5.Ո՞ր տառն է բաց թողած՝ ձ, թե՞ ց.

կայ_ակ թխվա_ք ձվա_եղ







Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Թագավորը հյուրասիրեց սև սալոր և բոլոճներ։

2. Նրանք թագավորից շատ գոհ հեռացան։

3. Արտահայտել սեփական ցանկությունները։

4. Խելոք բառի հականիշը հիմարն է։

5. Կայծակ, թխվածք, ձվածեղ բառերում բաց է թողած ծ-ն։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել հետաքրքիր դրվագները,

2. մեկնաբանել որոշ դրվագներ,

3. արտահայտել մտքերն ու զգացողությունները,

4. տարբերել բառերի հականիշները,

5. ճիշտ գրել ձ,ծ,ց-ի ուղղագրության բառերը։

Դաս 62- Ա.Իսահակյան, «Նուկիմ քաղաքի խելոքները» [Թեմատիկ պլանավորում]

Ձ-Ծ-Ց բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Նուկիմ քաղաքի բնակիչներն իսկապե՞ս խելոք էին:

2. Ո՞րն է հեքիաթի քո ամենասիրելի հատվածը:

3. Ինչպիսի՞ն են քո քաղաքի/գյուղի/ մարդիկ:

4.Ո՞րն է ծիծաղել բառի հականիշը.

☐ խոսել ☐ նստել ☐ լացել

5. Ի՞նչ ընդհանուր բառ կա հացթուխ, հացաման, զարեհաց բառերում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Նրանց ծաղրելու համար էին ասում խելոք:

2.Արտահայտել սեփական մտքերն ու զգացողությունները:

3.Նկարագրել իր շրջապատի մարդկանց:

4.Ծիծաղել բառի հականիշը լացելն է:

5.Բառերի ընդհանուր արմատը հաց բառն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել բովանդակության հետաքրքիր դրվագները,

2. մեկնաբանել բովանդակության որոշ դրվագներ,

3. արտահայտել մտքերն ու զգացողությունները,

4. տարբերել բառերի հականիշները,

5.տարբերել բառերի ընդհանուր արմատները;

Դաս 63- Վ.Սարոյան, «Երեք խորհուրդ» [Թեմատիկ պլանավորում]

Ղ-Խ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչպիսի՞ մարդ էր հեքիաթի հերոսը՝ աշխատասե՞ր, թե՞ ծույլ:

2. Ինչպե՞ս կինը դուրս հանեց նրան տնից:

3. Ինչի՞ համար կինը դուրս արեց նրան տնից:

4.Ո՞րն է ծույլ բառի հականիշը.

☐ աշխատասեր ☐ լացկան ☐ չար

5. Ի՞նչ ընդհանուր բառ կա բախտավոր, բախտակից, անբախտ բառերում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հեքիաթի հերոսը շատ ծույլ էր:

2. Հատակից մինչև դուռը չիր ու չամիչ շաղ տվեց:

3. Ուղարկեց փող աշխատելու:

4. Ծույլ բառի հականիշը աշխատասերն է:

5. Բառերի ընդհանուր արմատը բախտ բառն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել հեքիաթի բովանդակությունը,

2. մեկնաբանել բովանդակության որոշ դրվագներ,

3. վերարտադրել կարդացածը իր բառերով,

4. տարբերել բառերի հականիշները,

5. տարբերել բառերի ընդհանուր արմատները:

Դաս 64- Վ.Սարոյան, «Երեք խորհուրդ» [Թեմատիկ պլանավորում]

Ղ-Խ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Քանի՞ ոսկի կարողացավ աշխատել մարդը տասնութ տարիների ընթացքում։

2. Տուն վերադառնալիս նա ի՞նչ գնեց իր ոսկիներով։

3. Դրախտ և դժոխք բառերը հոմանիշնե՞ր են, թե՞ հականիշներ։

4.Ինչպիսի՞ն կարող է լինել խորհուրդը.

☐ օգտակար ☐ սպիտակ ☐ շատախոս

5.Ո՞ր տառն է բաց թողած՝ ղ, թե՞ խ.

ու-տ ա-ջիկ կո-պեք





Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Կարողացավ աշխատել երեք ոսկի։

2.Գնեց երեք խորհուրդ։

3. Դրախտ և դժոխք բառերը հականիշներ են։

4.Խորհուրդը կարող է լինել օգտակար։

5. Ուղտ, աղջիկ և կողպեք բառերում բաց է թողած ղ-ն։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել հեքիաթի բովանդակությունը,

2. մեկնաբանել որոշ դրվագներ,

3. տարբերել բառերի հականիշները,

4. կազմել բառակապակցություններ,

5.Ճիշտ գրել ղ,խ-ի ուղղագրության բառերը։

Դաս 65- Վ.Սարոյան, «Երեք խորհուրդ»                    [Թեմատիկ պլանավորում]

Ղ-Խ  բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Խորհուրդները պետք եկա՞ն հեքիաթի հերոսին, թե՞ ոչ։

2. Հեքիաթի հերոսը հարստացա՞վ, թե՞ մնաց աղքատ։

3. Ի՞նչ նոր բառեր կստանաս, եթե միացնես նշված բառազույգերը.

թոք+ախտ, լինդ+ախտ, ախտ+որոշում

4.Նշվածներից ո՞րն է կղզի.

☐ աղբյուր          ☐ Աղթամար          ☐ թուխս

5.Ո՞ր տառն է բաց թողած՝ ղ, թե՞ խ.

թ_կի          ս_տոր          կմա_ք





Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Խորհուրդները պետք եկան նրան։

2.Հեքիաթի հերոսը հարստացավ։

3. Կկազմվեն թոքախտ, լնդախտ և ախտորոշում բառերը։

4. Նշվածներից կղզին Աղթամարն է։

5. Թխկի,սխտոր և կմախք բառերում բաց է թողած խ-ն։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել հեքիաթի բովանդակությունը,

2. մեկնաբանել որոշ դրվագներ,

3. կազմել նոր բառեր,

4. տարբերել բառերի իմաստները,

5. ճիշտ գրել ղ,խ-ի ուղղագրության բառերը։

Դաս 66- Վ.Սարոյան, «Երեք խորհուրդ» [Թեմատիկ պլանավորում]

Ղ-Խ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Հեքիաթի ավարտին հերոսները երջանի՞կ էին, թե՞ դժբախտ։

2. Ո՞ր խորհուրդը քեզ շատ դուր եկավ։

3. Ի՞նչ կլիներ հերոսի հետ, եթե նա չգներ խորհուրդները։

4. Ի՞նչ ընդհանուր արմատ ունեն թղթադրամ, թղթապանակ, թղթակից բառերը։

5. Ո՞ր տառն է բաց թողած՝ ղ, թե՞ խ.

ընձու_տ | շա-գամ | ա-բյուր







Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հեքիաթի ավարտին հերոսները երջանիկ էին։

2. Արտահայտել սեփական կարծիքը։

3. Հերոսները դժբախտ ու տխուր կլինեին։

4. Ունեն ընդհանուր թուղթ արմատը։

5. Ընձուղտ, շաղգամ, աղբյուր բառերում բաց է թողած ղ-ն։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել հեքիաթի բովանդակությունը,

2. մեկնաբանել որոշ դրվագներ,

3. ներկայացնել սեփական դիրքորոշումը,

4. տարբերել բառերի ընդհանուր արմատները,

5. ճիշտ գրել ղ,խ-ի ուղղագրության բառերը։

Դաս 67-Է.Աղայան, «Գարունածաղիկը» [Թեմատիկ պլանավորում]

Մ-Ն բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ու՞մ էր ամենից շատ սիրում մայր հողը՝ ծաղկի՞ն, թե՞ ծառին:

2. Մայր հողը ինչպե՞ս քնեցրեց իր սիրելի զավակին՝ օրորելո՞վ, թե՞ բարկանալով:

3. Բուքն ու բորանը հոմանիշնե՞ր են, թե՞ հականիշներ:

4. Ի՞նչ ընդհանուր արմատ ունեն գարունածաղիկ և ձնծաղիկ բառերը:

5. Ո՞ր տառն է բաց թողած Սա_վել և ճա_փա բառերում՝ մ, թե՞ ն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ամենից շատ սիրում էր ծաղկին:

2. Գրկեց ծաղկին և անուշ օրոր երգեց:

3. Բուքն ու բորանը հոմանիշներ են:

4. Ունեն ընդհանուր ծաղիկ արմատը:

5. Սամվել և ճամփա բառերը գրվում են մ-ով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել հեքիաթի բովանդակությունը,

2. մեկնաբանել որոշ դրվագներ,

3. տարբերել հոմանիշ բառերը,

4. տարբերել բառերի ընդհանուր արմատները,

5 .ճիշտ գրել մ,ն-ի ուղղագրության բառերը:

Դաս 68-Է.Աղայան, «Գարունածաղիկը» [Թեմատիկ պլանավորում]

Մ-Ն բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Մայր հողի գրկում տա՞ք է, թե՞ ցուրտ։

2. Ու՞մ էր տեսել երազում գարունածաղիկը։

5. Ո՞ր տառն է բաց թողած՝ մ, թե՞ ն.

զա-բյուղ ճա_պրուկ նա_ակ







4. Ի՞նչ է Ամանորը՝ տո՞ն, թե՞ անձնանուն։

5. Ո՞ր տառն է բաց թողած ա_պայման և ա_պետք բառերում՝ մ, թե՞ ն։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մայր հողի գրկում շատ տաք էր։

2. Ծաղիկը երազում տեսել էր գարունին։

3.Կկազմվեն զամբյուղ, ճամպրուկ, նամակ բառերը։

4.Ամանորը տոն է։

5.Անպայման և անպետք բառերը գրվում են ն-ով։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել հեքիաթի բովանդակությունը,

2. մեկնաբանել որոշ դրվագներ,

3. ճիշտ գրել մ,ն-ի ուղղագրության բառերը,

4. տարբերել բառերի իմաստները,

5. ճիշտ գրել մ,ն-ի ուղղագրության բառերը։

Դաս 69-Է.Աղայան, «Գարունածաղիկը» [Թեմատիկ պլանավորում]

Մ-Ն բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ խորհուրդ տվեց մայր հողը գարունածաղիկին։

2. Գարունածաղիկը լսե՞ց մայր հողի խորհուրդը։

3. Երբ գարունածաղիկը դուրս եկավ մայր հողի գրկից, դրսում ձմե՞ռ էր, թե՞ ամառ։

4. Նշվածներից ո՞րն է սառնամանիք բառի հականիշը.

☐ շոգ ☐ ցուրտ ☐ հեռու

5. Ո՞ր տառն է բաց թողած՝ վ, թե՞ ֆ.

նա_աստի զին_որ ա_տո







Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Մայր հողը խորհուրդ տվեց սպասել և դուրս չգալ իր տաք գրկից։

2.Գարունածաղիկը չլսեց մորը։

3.Դրսում ցուրտ ձմեռ էր։

4.Սառնամանիք բառի հականիշը շոգն է։։

5. Նավաստի,զինվոր,ավտո բառերում բաց է թողած վ-ն։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել հեքիաթի բովանդակությունը,

2. վերարտադրել կարդացածը,

3. տրամաբանորեն պատասխանել հարցին,

4. տարբերել բառերի հականիշները,

5. ճիշտ գրել վ,ֆ-ի ուղղագրության բառերը։

Դաս 70-Է.Աղայան, «Գարունածաղիկը» [Թեմատիկ պլանավորում]

Մ-Ն բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Երբ դուրս եկավ մայր հողի գրկից, ովքե՞ր դիմավորեցին գարունածաղիկին:

2. Ու՞մ զավակներն էին բուքն ու բորանը՝ սառնամանիքի՞, թե՞ արևի:

3.Գարունածաղիկն ու գարունը հանդիպեցի՞ն իրար, թե՞ ոչ:

4.Նշվածներից ո՞րն է կապույտ բառի հոմանիշը.

☐ սև ☐ երկնագույն ☐ բարի

5. Ո՞ր տառն է բաց թողած՝ վ, թե ֆ.

Ա_րիկա _իզիկա _րանսիա

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Գարունածաղիկին դիմավորեցին բուքն ու բորանը:

2.Սառնամանիքի զավակներն էին:

3. Չհանդիպեցին:

4.Կապույտ բառի հոմանիշը երկնագույնն է:

5. Աֆրիկա, ֆիզիկա, Ֆրանսիա բառերում գրվում է ֆ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել հեքիաթի բովանդակությունը,

2. տրամաբանորեն պատասխանել հարցին,

3. վերարտադրել հեքիաթի բովանդակությունը,

4. տարբերել բառերի հոմանիշները,

5.Ճիշտ գրել վ,ֆ-ի ուղղագրության բառերը:

Դաս 71-Ս.Վարդանյան, « Թռիչք»                                        Թեմատիկ պլանավորում

Ր-Ռ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Որտե՞ղ էին ապրում թրթուրները:

2. Ինչե՞ր էին նրանք կրծոտում ծառերի վրա:

3. Ի՞նչ էր երազում ջահել թրթուրը:

4.Նշվածներից ինչե՞րը կարող են թռչել.

☐ արագիլ ☐ ծառ ☐ ինքնաթիռ ☐ հեռուստացույց

5. Ո՞ր տառն է բաց թողած՝ ր, թե՞ ռ.

թ_թու_                    փ_փու_                    փետու_







Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Թրթուրներն ապրում էին ծառերի տերևների վրա:

2.Նրանք կրծոտում էին ծառերի տերևները:

3. Երազում էր թռչել:

4.Կարող են թռչել արագիլը, ինքնաթիռը:

5. Թրթուր, փրփուր, փետուր բառերում գրվում է ր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել հեքիաթի բովանդակությունը,

2. պատմել կարդացածը,

3. վերարտադրել հեքիաթի բովանդակությունը,

4. ճիշտ կիրառել բառի իմաստը,

5. ճիշտ գրել ր,ռ-ի ուղղագրության բառերը:

Դաս 72-Ս.Վարդանյան, « Թռիչք»　　　　　　　　　　　　Թեմատիկ պլանավորում

Ր-Ռ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Թրթուրի երազանքը իրականացա՞վ, թե՞ ոչ:

2. Ի՞նչ են անվանում թռչող թրթուրներին՝ թիթեռներ, թե՞ ծիտիկներ:

3.Ո՞ր հատվածն է քեզ ամենից շատ դուր եկել:

4.Նշվածներից ո՞րն է ծեր բառի հականիշը.

☐ առողջ　　☐ ջահել　　☐ կախկոտ

5. Ո՞ր տառն է բաց թողած՝ ր, թե՞ ռ.

զա_նուկ　　դ_նապան　　_աղիո

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Թրթուրի երազանքը իրականացավ:

2. Թռչող թրթուրներին անվանում են թիթեռներ:

3. Արտահայտել սեփական մտքերը և զգացողությունները:

4. Ծեր բառի հականիշը ջահելն է:

5.Կկազմվեն զառնուկ, դռնապան, ռադիո բառերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել հեքիաթի բովանդակությունը,

2. տրամաբանորեն պատասխանել հարցին,

3. անկաշկանդ արտահայտել զգացողությունները,

4. տարբերել բառերի հականիշները,

5. ճիշտ գրել ր,ռ-ի ուղղագրության բառերը:

Դաս 73- Օ. Ուայլդ, «Աստղամանուկը». **1**-ին մաս [Թեմատիկ պլանավորում]

Զ-Ս բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Աստղամանուկին որտեղի՞ց էին գտել փայտահատները:

2. Փայտահատը Աստղամանուկին թողե՞ց անտառում, թե՞ բերեց տուն:

3. Ի՞նչ ընդհանուր բառ կա փայտահատ և փայտաշեն բառերում:

4. Ո՞րն է ճերմակ բառի հոմանիշը.

☐ սև ☐ սպիտակ ☐ դեղին

5. Ո՞ր տառն է բաց թողած՝ զ, թե՞ ս.

բա_կաթող ընկույ_ բա_ուկ







Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Փայտահատները Աստղամանուկին գտել էին անտառից:

2. Փայտահատները Աստղամանուկին բերեցին տուն:

3. Ընդհանուր է փայտ բառը:

4. Ճերմակ բառի հոմանիշը սպիտակն է:

5. Բազկաթոռ, ընկույզ, բազուկ բառերում գրվում է զ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել հեքիաթի բովանդակությունը,

2. վերարտադրել կարդացածը,

3. տարբերել բառերի ընդհանուր արմատները,

4. տարբերել բառերի հոմանիշները,

5. ճիշտ գրել զ,ս-ի ուղղագրության բառերը:

Դաս 74- Օ. Ուայլդ, «Աստղամանուկը». **1-**ին մաս [Թեմատիկ պլանավորում]

Զ-Ս բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ու՞մ տանն էր մեծանում Աստղամանուկը՝ փայտահատի՞, թե՞ կոշկակարի։

2. Աստղամանուկը գեղեցի՞կ էր, թե՞ տգեղ։

3. Ինչպե՞ս վարվեց Աստղամանուկը խեղճ կնոջ հետ։

4. Ի՞նչ ընդհանուր բառ կա Աստղամանուկ և աստղածաղիկ բառերում։

5. Ո՞ր տառն է բաց թողած՝ զ, թե՞ ս.

ավտոբու_ տրոլեյբու_






Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Աստղամանուկը մեծանում էր փայտահատի տանը։

2. Աստղամանուկը շատ գեղեցիկ էր։

3. Աստղամանուկը շատ վատ վարվեց նրա հետ. ծաղրեց և քարերով խփեց նրան։

4. Ընդհանուր է աստղ բառը։

5. Կազմվում են ավտոբուս և տրոլեյբուս բառերը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. մտապահել կարևոր դրվագները,

2. ճանաչել գլխավոր հերոսին,

3. բնութագրել կերպարին,

4. տարբերել բառերի ընդհանուր արմատները,

5. ճիշտ գրել զ,ս-ի ուղղագրության բառերը։

Դաս 75- Օ. Ուայլդ, «Աստղամանուկը». 1-ին մաս Թեմատիկ պլանավորում

Ձ-Ս բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞վ էր թշվառ կինը՝ Աստղամանուկի մորաքու՞յրը, թե՞ մայրը։

2. Թշվառ կինը հեռացա՞վ քաղաքից, թե՞ մնաց քաղաքում։

3. Աստղամանուկը չա՞ր էր, թե՞ բարի։

4. Ո՞ր բառն է բնութագրում Աստղամանուկին.

- [ ] բարի
- [ ] հոգատար
- [ ] անխիղճ

4. Ո՞րն է մուրացկան բառի հականիշը.

- [ ] գոռոզ
- [ ] հարուստ
- [ ] բարի

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Թշվառ կինը Աստղամանուկի մայրն էր։

2. Թշվառ կինը հեռացավ քաղաքից։

3. Աստղամանուկը շատ չար էր։

4. Աստղամանուկն անխիղճ էր։

5. Մուրացկան բառի հականիշը հարուստն է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. մտապահել կարևոր դրվագները,

2. ճանաչել գլխավր հերոսին,

3. նկարագրել գլխավոր հերոսին,

4. բնութագրել գլխավոր հերոսին,

5.տարբերել բառերի հականիշները հոմանիշներից։

Դաս 76- Օ. Ուայլդ, «Աստղամանուկը». 2-րդ մաս [Թեմատիկ պլանավորում]

Ժ-Ճ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչու՞ ընկերները սկսեցին ծաղրել Աստղամանուկին:

2. Աստղամանուկն ինչու՞ տգեղացավ:

3. Աստղամանուկը փնտրու՞մ էր իր մայրիկին, թե՞ ոչ:

4. Բառամասերը միացնելով՝ ի՞նչ նոր բառեր կկազմես.

ոսկե → դրամ ____________

մետաղա → դրամ ____________

թղթա → դրամ ____________

5. Ո՞րն է մայրամուտ բառի հականիշը.

☐ լուսաբաց ☐ շոգ ☐ տգեղ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Աստղամանուկը շատ տգեղացել էր:

2. Նա տգեղացել էր իր վատ արարքների պատճառով:

3. Աստղամանուկը փնտրում էր իր մայրիկին:

4. Կկազմվեն ոսկեդրամ, մետաղադրամ, թղթադրամ բառերը:

5. Մայրամուտ բառի հականիշը լուսաբացն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. մտապահել կարևոր դրվագները,

2. ճանաչել գլխավոր հերոսին,

3. նկարագրել հեքիաթի գործողությունները,

4. կազմել նոր բառեր,

5. տարբերել բառերի հականիշները հոմանիշներից:

Դաս 77- Օ. Ուայլդ, «Աստղամանուկը». 2-րդ մաս Թեմատիկ պլանավորում

Ժ-Շ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Աստղամանուկին ինչու՞ չօգնեցին անտառի բնակիչները:

2. Ծերուկը որտե՞ղ փակեց Աստղամանուկին:

3. Աստղամանուկն ի՞նչ պետք է գտներ անտառից:

4. Ո՞րն է խոշոր բառի հականիշը.

☐ մանր ☐ հեռու ☐ մաքուր

5. Ո՞ր տառն է բաց թողած՝ ժ, թե՞ շ:

Կ_եռք _ու_ան պատ_գամբ





Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Աստղամանուկը նրանց վնասել էր:

2. Ծերուկը նրան փակեց զնդանում:

3. Պետք է գումար գտներ:

4. Խոշոր բառի հականիշը մանրն է:

5. Կշեռք, շուշան, պատշգամբ բառերում գրվում է շ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. մեկնաբանել հերոսի արարքները,

2. վերապատմել հեքիաթի որոշ դրվագներ,

3. նկարագրել հեքիաթի գործողությունները,

4. տարբերել բառերի հականիշները հոմանիշներից,

5. ճիշտ գրել ժ,շ-ի ուղղագրության բառերը:

Դաս 78- Օ. Ուայլդ, «Աստղամանուկը». 3-րդ մաս [Թեմատիկ պլանավորում]

Հ բաղաձայնի ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1.Անտառում Աստղամանուկի մարմինը ի՞նչը ծակծկեց՝ տատա՞սկը, թե՞ մանուշակը։

2. Աստղամանուկն օգնե՞ց թակարդն ընկած նապաստակին, թե՞ ոչ։

3. Ինչպե՞ս ոսկեղրամը գտավ Աստղամանուկը՝ նապաստակի ՞օգնությամբ, թե՞ օձի։

4.Ստրկություն բառի հականիշը ազատությու՞նն է, թե՞ առողջությունը։

5.Նշված բառերում h տառը գրվու՞մ է, թե՞ ոչ.

աշխար_ ճանապար_ խոր_ուրդ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Աստղամանուկի մարմինը ծակծկեց տատասկը։

2. Աստղամանուկն օգնեց նապաստակին։

3.Ոսկեղրամը գտավ նապաստակի օգնությամբ։

4. Ստրկություն բառի հականիշը ազատությունն է։

5. Աշխարհ, ճանապարհ, խորհուրդ բառերում h-ն գրվում է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել հեքիաթի գործողությունները,

2. նկարագրել հերոսի արարքները,

3. վերարտադրել հեքիաթի որոշ դրվագներ,

4. տարբերել բառերի հականիշները հոմանիշներից,

5. ճիշտ գրել h-ի ուղղագրության բառերը։

Դաս 79- Օ. Ուայլդ, «Աստղամանուկը». 3-րդ մաս Թեմատիկ պլանավորում

Հ բաղաձայնի ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Աստղամանուկն օգնե՞ց բորոտ ծերունուն, թե՞ ոչ:

2. Աստղամանուկը դեղին ոսկեդրամը նույնպե՞ս տվեց ծերունուն, թե՞ պահեց իրեն:

3. Աստղամանուկը փոխե՞լ էր իր բնավորությունը, թե՞ էլի չար էր:

4. Աղաչել և պաղատել բառերը հոմանիշնե՞ր են, թե՞ հականիշներ:

5. Նշված բառերում հ տառը գրվու՞մ է, թե՞ ոչ.

ար_ամար_ել օր_նել նախագա_

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Աստղամանուկն օգնեց ծերունուն:

2. Աստղամանուկը դեղին ոսկեդրամը նույնպես տվեց ծերունուն:

3. Աստղամանուկը փոխել էր բնավորությունը:

4. Աղաչել և պաղատել բառերը հոմանիշներ են:

5. Արհամարհել, օրհնել, նախագահ բառերում հ-ն գրվում է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել հեքիաթի գործողությունները,

2. նկարագրել հերոսի արարքները,

3. վերարտադրել հեքիաթի որոշ դրվագներ,

4. տարբերել բառերի հոմանիշները,

5. ճիշտ գրել հ-ի ուղղագրության բառերը:

Դաս 80- Օ. Ուայլդ, «Աստղամանուկը». 3-րդ մաս Թեմատիկ պլանավորում

ԵՎ (և) – ի ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Աստղամանուկը կարմիր ոսկեդրամը նո՞ւյնպես տվեց ծերուկին:

2. Ինչու՞ պահապանները խոնարհվեցին Աստղամանուկի առաջ. նա հարստացե՞լ էր, թե՞ գեղեցկացել:

3. Ինչպե՞ս կանվանենք արքայի որդուն՝ արքայա՞զն, թե՞ վաճառական:

4. Ո՞րն է թախիծ բառի հականիշը.

☐ ուրախություն ☐ բարություն ☐ քաջություն

5. Ո՞ր տառն է բաց թողած՝ և, թե՞ եվ.

ար_ անձր_ տեր_







Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Աստղամանուկը կարմիր ոսկեդրամը նույնպես տվեց ծերուկին:

2. Աստղամանուկը գեղեցկացել էր:

3. Արքայի որդուն անվանում են արքայազն:

4. Թախիծ բառի հականիշը ուրախությունն է:

5. Արև, անձրև, տերև բառերում գրվում է և:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նկարագրել հեքիաթի գործողությունները,

2. մտապահել կարևոր դրվագը,

3. նոր բառեր կազմել,

4. տարբերել բառերի հականիշները հոմանիշներից,

5. ճիշտ գրել և-ի ուղղագրության բառերը:

Դաս 81- Օ. Ուայլդ, «Աստղամանուկը». 3-րդ մաս [Թեմատիկ պլանավորում]

ԵՎ (և) – ի ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞վ էր իրականում Աստղամանուկը:

2. Ինչպե՞ս ընդունեցին Աստղամանուկին պալատում՝ ուրախությա՞մբ, թե՞ տհաճությամբ:

3. Աստղամանուկի ծնողները ներեցի՞ն նրա վատ արարքները:

4. Ի՞նչ նոր բառեր կկազմվեն, եթե միացնենք սլաքները.

զինե ⟶ վաճառ

ոսկե ⟶ վարս

տարե ⟶ վերջ

5. Ո՞ր տառն է բաց թողած՝ և, թե՞ եվ.

Եր_ան Ս_ան եղր_անի







Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Աստղամանուկը իրականում արքայազն էր:

2. Պալատում նրան ընդունեցին ուրախությամբ:

3. Աստղամանուկի ծնողները ներեցին նրա վատ արարքները:

4. Կկազմվեն զինեվաճառ, ոսկեվարս, տարեվերջ բառերը:

5. Երևան, Սևան, եղրևանի բառերում գրվում է և:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. բնութագրել կերպարին,

2. ներկայացնել հեքիաթի գործողությունները,

3. մեկնաբանել հերոսի արարքները,

4. կազմել նոր բառեր,

5. ճիշտ գրել և-ի ուղղագրության բառերը:

Դաս 82- Օ. Ուայլդ, «Աստղամանուկը». 3-րդ մաս Թեմատիկ պլանավորում

ԵՎ (և) – ի ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Աստղամանուկը դարձա՞վ թագավոր, թե՞ մնաց աղքատ թափառական:

2. Աստղամանուկը լա՞վ թագավոր էր, .թե՞ վատ:

3. Հեքիաթի ո՞ր հատվածն է ամենից շատ քեզ դուր եկել:

4. Ի՞նչ նոր բառեր կկազմվեն, եթե միացնենք սլաքները.

ոսկե ⟶ վազ

հոգե ⟶ վիճակ

գերե ⟶ վարել

5. Ո՞ր տառն է բաց թողած՝ և, թե՞ եվ.

ար_ածաղիկ ալ_որ սերկ_իլ





Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Աստղամանուկը դարձավ թագավոր:

2.Աստղամանուկը լավ թագավոր էր:

3.Կարող է ներկայացնել իրեն դուր եկած հատվածը:

4. Կկազմվեն ոսկեվազ, հոգեվիճակ, գերեվարել բառերը:

5. Բաց է թողած և տառը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել կերպարին,

2. բնութագրել հերոսին,

3. մեկնաբանել հերոսի արարքները,

4. կազմել նոր բառեր,

5. ճիշտ գրել և-ի ուղղագրության բառերը:

Դաս 83- Ռ. Մարուխյան, «Կախարդված տղան» [Թեմատիկ պլանավորում]

Կրկնակ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչո՞ւ էր փոքրացել տղան:

2. Ո՞վ էր կախարդել տղային:

3. Ո՞րն է փոքրանալ բառի հականիշը.

☐ տխրել ☐ մեծանալ ☐ հեռանալ

4. Ի՞նչ նոր բառեր կկազմվեն, եթե միացնենք սլաքները.

ան ⟶ նման

ան ⟶ նշան

ան ⟶ նկատ

4. Ի՞նչ ձայն են հանում պատկերվածները.

Ֆ_ _ ալ



բ_ _ ալ



դ_ _ ալ



Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տղան փոքրացել էր վատ արարքների պատճառով:

2. Նրան կախարդել էր մայր մրջյունը:

3.Փոքրանալ բառի հականիշը մեծանալն է:

4. Կկազմվեն աննման ,աննշան, աննկատ բառերը:

5. Օձը ֆշշում է, բզեզը՝ բզզում, մեքենան՝ դռռում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել հեքիաթի գործողությունները,

2. բնութագրել հերոսին,

3. տարբերել հականիշ բառերը,

4. կազմել նոր բառեր,

5. ճիշտ գրել կրկնակ բաղաձայն ունեցող բառերը:

Դաս 84- Ռ. Մարուխյան, «Կախարդված տղան» [Թեմատիկ պլանավորում]

Կրկնակ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչի՞ց էր թել պատրաստում տղան։

2. Ինչու՞ էր մայր մրջյունը կախարդել տղային։

3. Ո՞րն է բնօրրան բառի հոմանիշը.

☐ վարսավիրանոց ☐ հայրենի տուն ☐ հրապարակ

4. Բառերն ինչպե՞ս «կշատանան», եթե միացնենք սլաքները.

թռչուն ⟶ ներ

բաղաձայն ⟶ ներ

ավան ⟶ ներ

5.Ո՞ր բաղաձայններն են բաց թողած.

Ան _ ա Էմ_ ա բնօր_ան

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տղան թել էր պատրաստում զանգակածաղկի նեկտարից։

2. Տղան քանդել էր նրա տունը։

3. Բնօրրան բառին հոմանիշ է հայրենի տուն բառակապակցությունը։

4. Բառերը «կշատանան» այսպես՝ թռչուններ, բաղաձայններ, ավաններ։

5. Աննա, Էմմա, բնօրրան բառերը գրվում են կրկնակ բաղաձայններով։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել հերոսի արարքները,

2. վերապատմել հեքիաթի որոշ հատվածներ,

3. տարբերել հոմանիշ բառերը,

4. կազմել նոր բառեր,

5. ճիշտ գրել կրկնակ բաղաձայն ունեցող բառերը։

Դաս 85- Ռ. Մարուխյան, «Կախարդված տղան» [Թեմատիկ պլանավորում]

Կրկնակ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Տղան ամաչու՞մ էր իր վատ արարքի համար, թե՞ ոչ։

2. Տուն ավերողին կարելի՞ է ներել։

3. Բզեզը, մրջյունը և մեղուն միջատնե՞ր են, թե՞ կենդանիներ։

4. Ի՞նչ նոր բառեր կկազմվեն, եթե միացնենք սլաքները.

երկ ⟶ կենցաղ

ընդ ⟶ դեմ

քիմ ⟶ մաքրում

5. Ո՞ր բաղաձայններն են բաց թողած.

շ_ուկ    դ_ում    տոն_ա

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տղան ամաչում էր իր վատ արարքից։

2. Տուն ավերողին չեն ներում։

3. Բզեզը, մրջյունը և մեղուն միջատներ են։

4. Կկազմվեն երկկենցաղ, ընդդեմ, քիմմաքրում բառերը։

5. Շշուկ, դդում, տոննա բառերը գրվում են կրկնակ բաղաձայններով։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել հերոսի արարքները,

2. արտահայտել սեփական մտքերը,

3. տարբերել միջատները կենդանիներից,

4. կազմել նոր բառեր,

5. ճիշտ գրել կրկնակ բաղաձայն ունեցող բառերը։

Դաս 86- Վ.Այգեկցի, «Առյուծն ու մարդը» [Թեմատիկ պլանավորում]

Առակ. արձակ և չափածո առակները

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ումի՞ց էին զարհուրած փախչում կենդանիները:

2. Առյուծը փախա՞վ մարդուց, թե՞ ոչ:

3. Ի՞նչ ստեղծագործություն է «Առյուծն ու մարդը».

☐ բանաստեղծություն ☐ առակ ☐ հեքիաթ

4. Զարհուրել բառի հոմանիշը սարսափե՞լն է, թե՞ ծիծաղելը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կենդանիները զարհուրած փախչում էին մարդուց:

2. Առյուծը մարդուց չփախավ:

3. «Առյուծն ու մարդը» առակ է:

4. Զարհուրել բառի հոմանիշը սարսափելն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել առակի գործողությունները,

2. բնութագրել հերոսներին,

3. տարբերել առակը հեքիաթից ու բանաստեղծությունից,

4. ճանաչել բառերի հոմանիշները:

Դաս 87- Վ.Այգեկցի, «Առյուծն ու մարդը» Թեմատիկ պլանավորում

Առակ. արձակ և չափածո առակները

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞վ է առակի հեղինակը։

2. Մարդը ազնի՞վ վարվեց առյուծի հետ։

3. Առյուծը կարո՞ղ է խոսել։

4. Առյուծը կենդանիների արքան է, իսկ ո՞րն է թռչունների արքան։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Առակի հեղինակը Վարդան Այգեկցին է։

2. Մարդը ազնիվ չվարվեց առյուծի հետ։

3. Առակներում կենդանիներ կարող են խոսել։

4. Թռչունների արքան արծիվն է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել ստեղծագործությունների հեղինակներին,

2. բնութագրել հերոսների արարքները,

3. տարբերել առակի ժանրային որոշ առանձնահատկություններ,

4. ճանաչել կենդանիներին։

Դաս 88- Հ. Շիրազ, «Մարգարիտն ու փրփուրը» [Թեմատիկ պլանավորում]

Վանկ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞վ է առակի հեղինակը։

2. Որտե՞ղ էր ապրում մարգարիտը։

3. Որտե՞ղ էր ապրում փրփուրը։

4. Քանի՞ վանկ ունի գանձ բառը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Առակի հեղինակը Հովհաննես Շիրազն է։

2. Մարգարիտն ապրում է ծովի խորքում։

3. Փրփուրն ապրում է ծովի երեսին։

4. Գանձ բառն ունի մեկ վանկ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել ստեղծագործությունների հեղինակներին,

2.նկարագրել հերոսներին,

3. ներկայացնել հերոսներին,

4. տարբերել բազմավանկ և միավանկ բառերը։

Դաս 89- Հ. Շիրազ, «Մարգարիտն ու փրփուրը» [Թեմատիկ պլանավորում]

Վանկ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Փրփուրը երկա՞ր մնաց ծովի երեսին։

2. Մարգարիտը մայր ծովի գա՞նձն էր, թե՞ տխրությունը։

3. Ո՞րն է քո սիրած կերպարը՝ մարգարի՞տը, թե՞ փրփուրը։

4. Քանի՞ վանկ կա մարդիկ բառում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Փրփուրը շատ կարճ մնաց ծովի երեսին. քամին ցրեց նրան։

2. Մարգարիտը մայր ծովի գանձն էր։

3. Ազատ է սեփական տեսակետը հայտնելու մեջ։

4. Մարդիկ բառում կա երկու վանկ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել առակի գործողությունները,

2. բնութագրել հերոսներին,

3. դրսևորել վերաբերմունք հերոսների հանդեպ,

4. տարբերել բազմավանկ և միավանկ բառերը։

Դաս 90- Ա. Խնկոյան <<Խխունջն ու սունկը>> [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:



1. Ինչպիսի՞ հատկանիշներ ունի խխունջը:
2. Ո՞րն է նախատել բառի հոմանիշը:
3. Ինչպիսի՞ ստեղծագործություն է <<Խխունջն ու սունկը>>.
    1. հեքիաթ
    2. առակ
    3. բանաստեղծություն

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Խխունջը դժգոհ, չար ու ինքնագոհ է:

2. Նախատել նշանակում է հանդիմանել, մեկին կշտամբել որևէ բանի համար:

3. <<Խխունջն ու սունկը>> առակ է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նկարագրել ստեղծագործության հերոսներին մի քանի հատկանիշներով,

2. ասել բնագրային հոմանիշները,

3. տարբերել առակը մյուս ստեղծագործություններից:

Դաս 91- Մ. Գոշ <<Ուղտը և իր խնամողը>>        Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1.Ո՞ր տառն է ճիշտ այս կենդանու անունն ստանալու համար՝ ու…տ: .

ա) ղ        բ) խ

2. Ի՞նչ ասաց ուղտն իր խնամողին:

3. Ո՞րն է տրտում բառի հոմանիշը.

ա) տխուր       բ) երջանիկ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կենդանու անունը գրվում է ղ-ով՝ ուղտ, իսկ երդումը՝ խ-ով՝ ուխտ:

2. Ուղտն իր խնամողին ասաց, որ երբ ստորին շրթունքը կախ է, և քայլելիս ոտքերից ձայն չի լսվում, ուրեմն տխուր է:

3. Տրտում բառի հոմանիշն է տխուրը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տարբերակել նույնահունչ, բայց տարբեր գրություն ունեցող բառերը,

2. ներկայացնել առակի գաղափարական բովանդակությունը,

3. ասել բնագրային հոմանիշները:

Դաս 92- Եզոպոս <<Աղվեսն ու հովազը>>, <<Գայլերն ու ոչխարները>> Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞րն է թվարկված կենդանիներից ամենախորամանկը.

1. հովազ 2. աղվես 3. գայլ 4. ոչխար

2. Ո՞րն է ճարտար բառի հոմանիշը:

1. ճկուն 2. նախշուն 3. հնարագետ

3. Ինչպե՞ս գայլերը հասան իրենց նպատակին:

4. Ինչպե՞ս է կոչվում այս կենդանիների խումբը. ______________



Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Աղվեսը շատ խորամանկ կենդանի է:

2. Ճարտար բառի հոմանիշը հնարագետն է:

3. Գայլերն իրենց նպատակին հասան խորամանկությամբ:

4. Ոչխարների խումբը կոչվում է հոտ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նկարագրել առակի հերոսներին,

2. ասել ճարտար բառի հոմանիշը,

3. ներկայացնել առակի դրվագը,

4. ասել ոչխարների խմբին տրվող անունը:

Դաս93 -Եզոպոս <<Ուղևորներն ու սոսին>> [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար



1. Ինչու՞ ուղևորները պառկեցին սոսի ծառի ստվերում:

2. Ինչպիսի՞ ծառ է սոսին.

  1. պտղատու
  2. անպտուղ

3. Ի՞նչ մտածեցին ուղևորները սոսու մասին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ուղևորները պառկեցին սոսի ծառի ստվերում ամռան շոգից պաշտպանվելու համար:

2. Սոսին անպտուղ ծառ է:

3. Ուղևորները մտածեցին, որ սոսին անպտուղ է, մարդկանց համար՝ անօգուտ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ ներկայացնել առակի բովանդակությունը,

2. տարբերել պտղատու և անպտուղ ծառերը,

3. ներկայացնել կարևոր դրվագը:

Դաս 94-Ավ. Իսահակյան <<Կյանքից թանկ բանը>>: Տողադարձ     Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար



1. Ո՞րը բոսոր բառի հոմանիշը չէ.

    1. ալ
    2. լաջվարդ
    3. կարմիր

2. Ո՞վ էր պարիկը:

3. Ի՞նչ  խնդրեց պարիկը իր օգնության դիմաց:

4. Ի՞նչ է նշանակում սրտաբեկ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Լաջվարդ բառը բոսորի հոմանիշը չէ:

2. Պարիկը ջրերի լուսեղեն ոգին է:

3. Պարիկն իր օգնության դիմաց խնդրեց աղավնու թևերը:

4. Սրտաբեկ  նշանակում  է վշտահար:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.**

1. նշել բնագրային բառի հոմանիշը,

2. ներկայացնել բանաստեղծության գաղափարական բովանդակությունը,

3. ներկայացնել կարևոր դրվագը,

4. բացատրել նորաձանոթ բառը:

Դաս 95-Առակի բարոյախոսական նշանակությունը: Տողադարձ  Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչու՞ աղավնու համար թևերն ավելի թանկ են, քան կյանքը:



2. Ե՞րբ ենք բառը տողադարձում:

3. Տողադարձի ո՞ր տարբերակն է ճիշտ՝ աշխատ-ել, աշխա-տել:




Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Աղավնու համար թևերն ավելի թանկ են, քան կյանքը, քանի որ առանց թևերի աղավնին ապրել չի կարող:

2. Գրելիս, երբ բառը տողի վրա չի տեղավորվում, նրա մի մասը ստիպված մյուս տողն ենք տանում:

3. Ճիշտ է աշխա-տել ձևը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել ստեղծագործության գաղափարական բովանդակությունը,

2. ասել տողադարձելու պատճառը,

3. ճիշտ տողադարձել բառը:

Դաս 96-Իվան Կռիլով <<Տերևներն ու արմատները>> [Թեմատիկ պլանավորում]



Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ո՞վ է <<Տերևներն ու արմատները>> առակի հեղինակը.

1. Իվան Կռիլով 2. Եզոպոս 3. Վ. Այգեկցի

2. Ինչպե՞ս էին իրենց բնութագրում տերևները:

3. Ինչքանո՞վ է կարևոր ծառի համար արմատը:

4. Ի՞նչ բառերից է կազմված գանգրահեր բառը:



Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. <<Տերևներն ու արմատները>> առակը գրել է Իվան Կռիլովը:

2. Տերևներն իրենց գովերգում էին, թե ինչքան լավն են, սիրուն են, հազար սույլ ու սոսափ ունեն:

3. Արմատը ծառի հիմքն է. առանց արմատի ո՛չ ծառը կլինի, ո՛չ տերևը:

4. Գանգրահեր բառը կազմված է գանգուր և հեր բառերից:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տարբերակել առակների հեղինակներին,

2. նկարագրել ստեղծագործության առանձին գործողությունները,

3. դուրս բերել ստեղծագործության գաղափարը,

4. կատարել բառակազմական վերլուծություն:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։



1.Ինչքանո՞վ են կարևոր տերևները ծառի համար։

2. Ինչքանո՞վ են կարևոր արմատները ծառի համար։

3. Ո՞րն է զեփյուռ բառի հոմանիշը.

1. զով
2. փոթորիկ
3. մրրիկ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տերևները ծառի կարևորագույն մասն են, պաշտպանում են պտուղները և մեզ թթվածին են տալիս։

2. Արմատը ծառի հիմքն է. առանց արմատի ո՛չ ծառը կլինի, ո՛չ տերևը։

3. Զեփյուռ բառի հոմանիշն է զովը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել բնագրի գաղափարական բովանդակությունը,

2. ներկայացնել կարևորը,

3. նշել բնագրային բառի հոմանիշը։

Դաս 98- Հիսուսի առակները <<Մարդը, որ ներել չէր ուզում>> [Թեմատիկ պլանավորում]




Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչո՞ւ էր Հիսուս Քրիստոսն իր միտքն արտահայտում առակներով:

2. Ինչպե՞ս վարվեց թագավորը իր ծառայի հետ առակի սկզբում:

3. Ինչպե՞ս վարվեց ծառան իր ծառայակցի հետ:

4. Ինչու՞ թագավորը չներեց իր ծառային:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հիսուս Քրիստոսը խոսում էր առակներով՝ Իր միտքն առավել հասկանալի դարձնելու նպատակով:

2. Թագավորը գթաց ծառային և պարտքը շնորհեց:

3. Ծառան իր ծառայակցին չլսեց և բանտ նետեց, մինչև պարտքը չվճարի:

4. Թագավարը չներեց ծառային, քանի որ վերջինս չէր խղճացել իր ծառայակից ընկերոջը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել Հիսուս Քրիստոսի՝ առակներով խոսելու պատճառը,

2. ներկայացնել առակի գաղափարական բովանդակությունը,

3. ներկայացնել առակի բովանդակությունը,

4. տեսակետ հայտնել առակում կատարվածի վերաբերյալ:

Դաս 99- Առակի բարոյախոսական նշանակությունը Թեմատիկ պլանավորում



Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչու՞ թագավորը չներեց իր ծառային:

2. Ինչպե՞ս կբնութագրես ծառային:

3. Ճի՞շտ վարվեց արդյոք թագավորը:

4. Ինչպիսի՞ն պետք է լինի իսկական ընկերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Թագավորը չներեց իր ծառային, քանի որ նա մեծամտացավ և չներեց իր ծառայակցին:

2. Ծառան զոռոզ, մեծամիտ ու եսասեր էր:

3. Թագավորը ճիշտ վարվեց իր ծառայի հետ, քանի որ ծառան մեծամտացավ:

4. Իսկական ընկերը պետք է լինի նվիրված ու անձնազոհ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել բնագրի գաղափարային բովանդակությունը,

2. նկարագրել բնագրի կերպարներին,

3. վերլուծել կերպարների արարքները,

4. տեսակետ հայտնել մարդկային որևէ արժանիքի վերաբերյալ:

Դաս 100- <<Ծնունդ Վահագնի>>: Խոսքի զարգացում                    Թեմատիկ պլանավորում



Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞վ էր Վահագնը:

2. Ի՞նչ մականվամբ էին կոչում Վահագնին:

3. Ի՞նչ է նշանակում խարտյաշ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Վահագնը հին հայերի պատերազմի, ռազմի, քաջության և հաղթանակի, ամպրոպի և կայծակի աստվածն է:

2. Վահագնը հայտնի էր Վիշապաքաղ մականվամբ, քանի որ հաղթել էր վիշապին:

3. Խարտյաշ նշանակում է ոսկեգույն, դեղին և բաց շագանակագույն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացել հեթանոսական աստված Վահագնին,

2. խոսել նրա սխրանքների և դրա հետևանքով ստացած մականվան մասին,

3. տալ բառի բացատրությունը:

Դաս 101- Բանաստեղծության կառուցվածքը, գաղափարը Թեմատիկ պլանավորում



Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ է նկարագրված <<Ծնունդ Վահագնի>> բանաստեղծության մեջ:

2. Ինչպիսի՞ն էին Վահագնի մազերն ու մորուքը(2 բա՛ռ ընդգծիր).

քամի հուր ջուր բոց

3. Ինչպե՞ս է կոչվում հին հայերենը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. <<Ծնունդ Վահագնի>> բանաստեղծության մեջ նկարագրված է Վահագնի ծնունդը:

2. Վահագնի մազերը հուր էին, մորուքը՝ բոց:

3. Հին հայերենը գրաբարն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել ստեղծագործության բովանդակությունը,

2. նկարագրել հերոսին,

3. մտապահել հին հայերենի անունը:

Դաս 102-Ս. Շահազիզ <<Երազ>> [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:



1. Ի՞նչ է նկարագրում հեղինակը այս բանաստեղծության մեջ.

1. երազ
2. իրականություն

2. Ու՞մ է տեսնում հեղինակն իր երազում.

1. երիտասարդ հորը
2. ծերացած մորը
3. փոքրիկ եղբորը

3. Ի՞նչ է նշանակում նշույլ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հեղինակն այս բանաստեղծության մեջ նկարագրում է իր երազը:

2. Նա երազում տեսնում է իր ծերացած մորը:

3. Նշույլ նշանակում է լույսի շող:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել բնագրի գաղափարական բովանդակությունը,

2. վերաշարադրել ստեղծագործության բովանդակությունը,

3. տալ բնագրային բառերի բացատրությունը:

Դաս 103 - Շեշտ: Հայերենի շեշտի վերջնավանկային դիրքը [Թեմատիկ պլանավորում]



Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞ր հնչյունն է շեշտ կրում՝ ձայնավո՞ր, թե՞ բաղաձայն:

2. Ո՞ր բառն է ճիշտ շեշտադրված.   ա) ա՛րկղ,  արկ՛ղ        բ) մի՛ խոսիր,  մի խոսի՛ր:

3. Ո՞ր բառի վրա շեշտ կդնես. «Մայրիկ, կարոտել եմ քեզ»:



Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Շեշտ է կրում ձայնավոր հնչյունը:

2. Ճիշտ են շեշտադրված՝ ա՛րկղ, մի՛ խոսիր:

3. Շեշտ պետք է դրվի կոչականի՝ մայրիկի վրա:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. գտնել շեշտադրված հնչյունը,

2. ճիշտ շեշտադրել բառերը,

3. նշել կոչականը և շեշտադրել:

Դաս 104- Բառային շեշտ [Թեմատիկ պլանավորում]




Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Բառերից որ՞ում շեշտը չի ընկնում վերջին վանկի ձայնավորի վրա.
   ա) դպրոց     բ) սառը     գ) այգեպան
2. Կարո՞ղ ես ճիշտ տեղում դնել հատուկ անունների շեշտերը.
   Հայաստան     Իտալիա
3. Ո՞ր բառերն ես շեշտված արտասանում. ընդգծի՛ր.
   ա) Ես ծիրան շատ եմ սիրում:
   բ) Ես ծիրան եմ շատ սիրում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Սառը բառում շեշտը չի ընկնում վերջին վանկի ձայնավորի վրա:

2. Ճիշտ շեշտադրումը սա է՝ Հայաստա՛ն, Իտա՛լիա:

3. Ա)-ում շեշտվում է շատ բառը, բ)-ում՝ ծիրանը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ճիշտ շեշտադրել բառերը,

2. Ճիշտ շեշտադրել օտար հատուկ անունները,

3. Ճիշտ դնել տրամաբանական շեշտը:

Դաս 105- Ա.Պարսամյան, « Մեր լավաշ հացը». Տրամաբանական շեշտ [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչի՞ մասին է բանաստեղծությունը:

2.Պարզ, մաքուր, ջինջ բառերը հոմանիշնե՞ր են, թե՞ հականիշներ:

3. Ո՞ր տառն է բաց թողած սուր- և համ -երել բառերում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բանաստեղծությունը լավաշի մասին է:

2.Պարզ, մաքուր, ջինջ բառերը հոմանիշներ են:

3.Սուրբ և համբերել բառերը գրվում են բ-ով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ վերաշարադրել բանաստեղծությունը,

2. տարբերակել հոմանիշները հականիշներից,

3. ճիշտ գրել բ,փ-ի ուղղագրության բառերը:

Դաս 106- Ավ. Իսահակյան, «Գետակի վրա». Հնչյունափոխություն Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞վ է բանաստեղծության հեղինակը:
2. Ինչի՞ն է նայում ուռին:
3. Ջրաշխարի, ջրային բառերում ո՞ր բառն է նույնը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բանաստեղծության հեղինակը Ավ. Իսահակյանն է:
2. Ուռին նայում է վազող ջրերին:
3. Նշված բառերում նույնն է ջուրը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ճանաչել ստեղծագործության հեղինակին,
2. հիշել բանաստեղծության բովանդակությունը,
3. գտնել ընդհանուր բառամասը:

Դաս 107- Ավ. Իսահակյան, «Գետակի վրա». Հնչյունափոխություն Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞ր տառն է հնչյունափոխվել տնային, գլխավոր բառերում:

2. Տրված ծառերից որո՞նք են մրգատու. ուռենի, տանձենի, խնձորենի:

3. Անհետանալ և հայտնվել բառերը հոմանիշնե՞ր են, թե՞ հականիշներ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տրված բառերում հնչյունափոխվել է ու ձայնավորը:

2. Մրգատու ծառերն են խնձորենին և տանձենին:

3. Տրված բառերը հականիշներ են:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. գտնել հնչյունափոխությունը,

2. տարբերել մրգատու ծառերը,

3. տարբերել հոմանիշներն ու հականիշները:

Դաս 108 – Ավ. Իսահակյան, «Գետակի վրա». Հնչյունափոխություն [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ նոր բառեր կկազմվեն լուռ և գլուխ բառերով:

2. Ո՞ր բառում է գրվում հ՝ աշխար-, ապաշխար-ել:

3. Հականիշների ի՞նչ զույգ կա բանաստեղծության վերջին քառատողում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կկազմվեն՝ լռակյաց, լռություն, գլխավոր, գլուխգոված և այլն:

2. Աշխարհ բառն է գրվում հ-ով:

3. Հականիշներ են՝ գալ-գնալ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. կազմել նոր բառեր,

2. ճիշտ գրել հ-ի ուղղագրության բառերը,

3. տարբերել հոմանիշներն ու հականիշները:

Դաս 109 - Ավ. Իսահակյան, «Գետակի վրա». Հնչյունափոխություն Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Որո՞նք են թեքվել և ուրախանալ բառերի հականիշները։

2. Ո՞ր բառում է գրվում օ՝ մողմ-րոր, մեղմ-րեն։

3. Ի՞նչ ձայն է հանում գետակը. կարկաչում է, ֆշշում է, խշշում է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Թեքվել և ուրախանալ բառերի հականիշներն են՝ ուղղվել, տխրել։

2. Մեղմօրոր բառը գրվում է օ-ով։

3. Գետակը կարկաչում է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. կազմել հականիշների զույգեր,

2. ճիշտ գրել օ,ո-ի ուղղագրության բառերը,

3. տարբերել բնաձայնությունները։

Դաս 110- Վ. Տերյան, «Աշուն». Է ձայնավորի հնչյունափոխությունը [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞վ է բանաստեղծության հեղինակը:

2. Ինչպե՞ս են գրվում թա-իծ և քա-ցր բառերը.

3. Ի՞նչ հնչյունափոխություն կա իգական բառում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բանաստեղծության հեղինակը Վահան Տերյանն է:

2. Տրված բառերը գրվում են այսպես՝ թախիծ, քաղցր:

3. Է–ն դարձել է ի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ճանաչել բանաստեղծության հեղինակին,

2. ճիշտ գրել ղ,խ-ի ուղղագրության բառերը,

3. գտնել հնչյունափոխությունը:

Դաս 111- Վ. Տերյան, «Աշուն». Է ձայնավորի հնչյունափոխությունը [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ բառերով է նկարագրվում աշունը:

2. Բանաստեղծության 1-ին քառատողում ո՞րն է թուխպ բառի հոմանիշը:

3. Ի՞նչ նոր բառեր կկազմվեն սեր բառով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Աշունը տխուր է, անձրևոտ:

2. Թուխպ բառի հոմանիշը ամպն է:

3. Կկազմվեն՝ սիրառատ, սիրելի, սիրահար և այլն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ նկարագրել տարվա եղանակը,

2. գտնել հոմանիշները,

3. կազմել նոր բառեր:

Դաս 112- Վ. Տերյան, «Աշուն». Է ձայնավորի հնչյունափոխությունը   Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ տառ է բաց թողած տեր- և անձր- բառերում:

2. Բանաստեղծության 3-րդ քառատողում ո՞րն է օտար բառի հականիշը:

3. Ի՞նչ նոր բառեր կկազմվեն տեր և նվեր բառերով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տրված բառերում բաց թողած տառը և-ն է:

2. Օտար բառի հականիշը հարազատն է:

3. Կկազմվեն՝ տիրակալ, տիրուհի, նվիրում, նվիրական և այլն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ճիշտ գրել և-ի ուղղագրության բառերը,

2. գտնել հականիշը,

3. կազմել նոր բառեր:

Դաս 113 - Հ. Շիրազ, «Գարնանամուտ». Ի ձայնավորի հնչյունափոխությունը [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞վ է «Գարնանամուտ» բանաստեղծության հեղինակը:

2. Ո՞ր տառն է բաց թողած վար- և մար- բառերում:

3. Որո՞նք են գարնան ամիսները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բանաստեղծության հեղինակը Հովի. Շիրազն է:

2. Նշված բառերը գրվում են դ-ով:

3. Գարնան ամիսներն են մարտը, ապրիլը, մայիսը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նշել ստեղծագործության հեղինակին,

2. ճիշտ գրել դ,թ-ի ուղղագրության բառերը,

3. մտապահել տարվա եղանակներն ու ամիսները:

Դաս 114 - Հ. Շիրազ, «Գարնանամուտ». Ի ձայնավորի հնչյունափոխությունը [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչերո՞վ զարդարված՝ բանաստեղծը սարից իջավ քաղաք։

2. Ո՞ր բառն է ընդհանուր գրիչ, գրություն, գրավոր բառերում։

3. Ինչպե՞ս են գրվում ա-ք և ի-նել բառերը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բանաստեղծը զարդարված էր ծաղիկներով։

2. Նշված բառերում ընդհանուր է գիրը։

3. Տրված բառերը գրվում են այսպես՝ աչք, իջնել։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ ներկայացնել բանաստեղծության հերոսին,

2. վերականգնել հնչյունափոխված բառամասը,

3. ճիշտ գրել ջ,չ-ի ուղղագրության բառերը։

Դաս 115 - Հ. Շիրազ, « Գարնանամուտ». Ի ձայնավորի հնչյունափոխությունը - Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ ծաղիկների անուններ կան բանաստեղծության մեջ:

2. Ի՞նչ հնչյունափոխություն կա դեղնել, խնդրել բառերում:

3. Բանաստեղծության վերջին տողում ո՞րն է մայրամուտ բառի հականիշը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կան մանուշակ, վարդ, շուշան, հասմիկ ծաղկանունները։

2. Տրված բառերում հնչյունափոխվել է ի ձայնավորը։

3. Մայրամուտի հականիշը լուսաբացն է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. մտապահել և թվարկել ծաղիկների անունները,

2. նշել հնչյունափոխությունը,

3. գտնել բառի հականիշը։

Դաս 116 - Հ. Շիրազ, « Գարնանամուտ»․ Ի ձայնավորի հնչյունափոխությունը - Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչի՞ մասին է « Գարնանամուտ» բանաստեղծությունը։

2. Ի՞նչ նոր բառեր կկազմվեն բարի և տարի բառերով։

3. Ո՞րն է գարնան քո սիրած տոնը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բանաստեղծությունը գարնան մասին է։

2. Կկազմվեն՝ բարեկամ, բարեհոգի, տարեմուտ, տարեվերջ և այլն։

3. Գարնանը նշվում է Մայրության և գեղեցկության տոնը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել՝ ինչի մասին է բանաստեղծությունը,

2. կազմել նոր բառեր,

3. համառոտ պատմել սիրելի տոնի մասին։

Դաս 117 - Գ.Սարյան, «Կարոտ». ՈՒ ձայնավորի հնչյունափոխությունը    Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Բանաստեղծն ո՞ւր է թռչում մտքով:

2. Անհանգիստ և հանգիստ բառերը հոմանի՞շ են, թե՞ հականիշ:

3. Ո՞ր տառն է բաց թողած ար-նանալ և զար-նել բառերում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բանաստեղծը թռչում է հայրենի տուն:

2. Տրված բառերը հականիշներ են:

3. Նշված բառերը գրվում են թ-ով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել բանաստեղծության կարևոր դրվագը,

2. տարբերել հականիշները,

3. ճիշտ գրել դ,թ-ի ուղղագրության համագործածական բառերը:

Դաս 118 -  Գ.Սարյան, «Կարոտ». ՈՒ ձայնավորի հնչյունափոխությունը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞վ էր հեռվում սպասում որդուն։

2. Նշված բառերում ո՞ր հնչյունն է դարձել զաղտնավանկ ը՝ նռնենի, տնային։

3. Ի՞նչ ընդհանուր մասնիկ ունեն անհանգիստ և անքուն բառերը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Որդուն սպասում էր մայրը։

2. Ու ձայնավորն է դարձել զաղտնավանկ ը։

3. Նշված բառերն ունեն –ան մասնիկը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել բանաստեղծության կարևոր դրվագը,

2. նշել հնչյունափոխությունը,

3. գտնել բառերի ընդհանուր մասնիկը։

Դաս 119 - Գ.Սարյան, «Կարոտ». ՈՒ ձայնավորի հնչյունափոխությունը [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչո՞վ էր բանաստեղծը թռչում դեպի տուն։

2. Բանաստեղծության 3-րդ քառատողում ո՞րն է սառը բառի հոմանիշը։

3. Ինչպե՞ս են գրվում հռ-ի և հռ-նած բառերը՝ գ-ո՞վ, թե՞ ք-ով։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բանաստեղծը թռչում էր մտքով։

2. Սառը բառի հոմանիշը պաղն է։

3. Տրված բառերը գրվում են գ-ով։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել բանաստեղծության կարևոր դրվագը,

2. գտնել բառի հոմանիշը,

3. ճիշտ գրել գ,ք-ի ուղղագրության համագործածական բառերը։

Դաս 120 - Գ.Սարյան, «Կարոտ». ՈՒ ձայնավորի հնչյունափոխությունը [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Բանաստեղծության 5-րդ քառատողում ի՞նչ կենդանի է գրկում հեղինակը սարերից իջնելիս։

2. Ի՞նչ ընդհանուր բառամաս կա ըմպել, ըմպանակ, ըմպելիք բառերում։

3. Բանաստեղծության 4-րդ քառատողում ո՞րն է ծեր բառի հականիշը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հեղինակը գառ է գրկում։

2. Տրված բառերի ընդհանուր բառամասը ումպն է։

3. Ծեր բառի հականիշը մանուկն է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել բանաստեղծության կարևոր դրվագը,

2. նշել ընդհանուր բառամասը,

3. գտնել բառի հականիշը։

Դաս 121 - Հ. Սահյան, «Արագիլներ». Ը ձայնավորի հնչյունափոխությունը [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞վ է բանաստեղծության հեղինակը։

2. Ո՞րն է արփի և արեգակ բառերի հոմանիշը բանաստեղծության 2-րդ քառատողում։

3. Մեկ բառով ինչպե՞ս կասես «մնաս բարով» արտահայտությունը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բանստեղծության հեղինակը Համո Սահյանն է։

2. Նշված բառերի հոմանիշը արևն է։

3. Մեկ բառով կարելի է ասել ցտեսություն, առայժմ և այլն։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նշել բանաստեղծության հեղինակին,

2. գտնել բառերի հոմանիշը,

3. բառակապակցությունն արտահայտել մեկ բառով։

Դաս 122 -  Հ. Սահյան,  «Արագիլներ». Ը  ձայնավորի հնչյունափոխությունը      Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞ր  թռչունի  մասին է բանաստեղծությունը։

2. Շները, կատուները, ձիերը կարո՞ղ են չվել։

3. Ո՞ր բառերից է կազմված լեռնազագաթ բառը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բանաստեղծությունը արագիլի մասին է։

2. Չվում են միայն թռչունները։

3. Նշված բառը կազմված է լեռ/ն/  և  գագաթ բառերից։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նշել՝ ինչի մասին է բանաստեղծությունը,

2. տարբերել կենդանիների և թռչունների առանձնահատկությունները,

3. առանձնացնել բառամասերը։

Դաս 123 - Հ.Սահյան, «Արագիլներ». Ը ձայնավորի հնչյունափոխությունը [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչո՞ւ էին արագիլները չվում «անձմեռ հեռու»։

2. Ճնճղուկները չվո՞ւմ են տաք երկրներ, թե՞ ոչ։

3. Ի՞նչ ընդհանուր մասնիկ ունեն անքուն և անձմեռ բառերը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Արագիլները չվում են, որ չմրսեն։

2. Բոլոր թռչունները չէ, որ չվում են տաք երկրներ։

3. Տրված բառերը կազմված են -ան մասնիկով։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նշել թռչունների չվելու պատճառը,

2. տարբերել ձմեռող և չվող թռչուններին,

3. նշել բառերի ընդհանուր մասնիկը։

Դաս 124- Մ. Մարգարյան, «Այդ  քամին է քո». ՅԱ , ՈՒՅ,  ՅՈՒ  երկհնչյունների հնչյունափոխությունը [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞վ էր երգում պատուհանի տակ։

2. Ինչպիսի՞ ճամփաներ էր փնտրում հրթիռը երկնուղիներում։

3. Ո՞րն  է արթնանալ բառի հականիշը բանաստեղծության մեջ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Երգում էր քամին։

2. Փնտրում էր աստղե ճամփաներ։

3. Արթնանալ բառի հականիշը քնելն է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել բանաստեղծության կարևոր դրվագը,

2. գտնել հատկանիշ ցույց տվող բառը,

3. տարբերել  հականիշ բառերը։

Դաս 125- Մ. Մարգարյան, «Այդ քամին է քո». ՅԱ , ՈՒՅ, ՅՈՒ երկհնչյունների հնչյունափոխությունը [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ գույների անուններ կան բանաստեղծության մեջ/շարունակի՛ր շարքը/։

2. Ի՞նչ նոր բառեր կկազմես ձյուն բառով։

3. Ո՞րն է մառախուղ բառի հոմանիշը բանաստեղծության մեջ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կան կանաչ, կարմիր գույների անունները/դեղին, կարմիր..../։

2. Կկազմվեն՝ ձնագնդիկ, ձնաբուք, ձնհալ և այլն։

3. Մառախուղ բառի հոմանիշը մշուշն է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. թվարկել գույների անունները և շարունակել շարքը,

2. կազմել նոր բառեր,

3. գտնել բառի հոմանիշը։

Դաս 126- Մ. Մարգարյան, «Այդ քամին է քո». ՅԱ , ՈՒՅ, ՅՈՒ երկհնչյունների հնչյունափոխությունը [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞րն է ուժեղ քամին՝ փոթորի՞կը, թե՞ հովիկը։

2. Ո՞ր բառն է հնչյունափոխվել գունավոր բառում։

3. Ի՞նչ նոր բառեր կկազմվեն՝ քույր, լույս բառերին ավելացնելով -իկ, -ավոր մասնիկները։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ուժեղ քամին փոթորիկն է։

2. Հնչյունափոխվել է գույնը։

3. Կկազմվեն քույրիկ, լուսավոր բառերը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տարբերել բառերի իմաստները,

2. նշել հնչյունափոխությունը,

3. կազմել նոր բառեր։

Դաս 127 -  Մ. Մարգարյան, «Այդ  քամին է քո». ՅԱ , ՈՒՅ,  ՅՈՒ  երկհնչյունների հնչյունափոխությունը [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Բացի հրթիռից, է՞լ ինչը կարող է սավառնել երկնուղիներով:

2. Ո՞րն  է  ունկնդրել  բառի հոմանիշը՝ խոսե՞լ, թե՞ լսել:

3. Ի՞նչ  նոր բառեր կկազմես ուղի բառով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Երկնուղիներով կարող են սավառնել ինքնաթիռը, ուղղաթիռը։

2. Ունկնդրել  բառի  հոմանիշը  լսելն  է։

3. Ուղի  բառով  կկազմվեն՝  ուղեկից,  ուղեգիր,  ուղենոր  և  այլն։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նշել թռչող այլ առարկաներ,

2. նշել բառի հոմանիշը,

3. կազմել նոր բառեր։

Դաս 128 - Վ.Դավթյան, «Գյուղի առավոտը». Հանգ և ռիթմ [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞վ է բանաստեղծության հեղինակը։
2. Բանաստեղծության մեջ ո՞րն է լուսաբաց բառի հոմանիշը։
3. Ի՞նչ նոր բառեր կկազմվեն հաց բառով։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բանաստեղծության հեղինակը Վ.Դավթյանն է։
2. Լուսաբաց բառի հոմանիշը առավոտն է։
3. Հաց բառով կկազմվեն՝ հացթուխ, հացատուն, հացահատիկ և այլն։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ճանաչել ստեղծագործության հեղինակին,
2. գտնել բառի հոմանիշը,
3. կազմել նոր բառեր։

Դաս 129 - Վ.Դավթյան, «Գյուղի առավոտը». Հանգ և ռիթմ [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ են թխում թոնրի մեջ։

2. Բանաստեղծության մեջ ի՞նչ ձայնով է լալիս գառը։

3. Ինչպե՞ս կնկարագրես գյուղը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Թոնրում թխում են հաց, լավաշ։

2. Գառը լալիս է մայունով։

3. Գյուղական կյանքը տարբերվում է քաղաքային կյանքից։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել հաց ու լավաշ թխելու ավանդական տեղը,

2. տարբերել կենդանիների ձայների անվանումները,

3. համառոտ նկարագրել գյուղը։

Դաս 130-  Պ.Սևակ, « Ջրերի լեզուն». Բանաստեղծական տուն          Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞վ է բանաստեղծության  հեղինակը:

2. Ինչպե՞ս է «խոսում» ջուրը. քչքչում է, քչփչում է:

3. Ի՞նչ նոր բառեր կկազմես լեզու  բառով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բանաստեղծության հեղինակը Պ.Սևակն է:

2. Ջուրը քչքչում է:

3. Կկազմվեն՝ լեզվանի, լեզվաբան, լեզվակռիվ և այլն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ճանաչել բանաստեղծության հեղինակին,

2. տարբերել բնաձայնական բառերը,

3. կազմել նոր բառեր:

Դաս 131-  Պ.Սևակ, « Ջրերի լեզուն». Բանաստեղծական տուն          Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ջուրը կարո՞ղ է լեզու ունենալ:

2. Ի՞նչ բառակապակցություններ կկազմես ջուր բառով:

3. Մարդը կարո՞ղ է ապրել առանց ջրի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ջրի՝ լեզու ունենալը փոխաբերական իմաստով է:

2. Կկազմվեն՝ սառը ջուր, պղտոր ջուր, մաքուր ջուր և այլն:

3. Մարդը չի կարող ապրել առանց ջրի. ջուրը կյանք է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տարբերել բառի ուղիղ  և փոխաբերական իմաստները,

2. կազմել բառակապակցություններ,

3. համառոտ ներկայացնել ջրի կարևորությունը մարդու կյանքում:

Դաս 132- Ռ.Քիփլինգ, «Թե ինչպես գրվեց առաջին նամակը» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Հարյուրավոր դարեր առաջ մարդիկ գրել-կարդալ գիտեի՞ն:

2. Որտե՞ղ էին ապրում նախամարդիկ:

3. Տեքստի 1-ին հատվածում ո՞րն է աղջիկ բառի հոմանիշը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Շատ դարեր առաջ մարդիկ գրել-կարդալ չգիտեին:

2. Նախամարդիկ ապրում էին քարանձավում:

3. Աղջիկ բառի հոմանիշը դստրիկն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել տեքստի կարևոր դրվագը,

2. համառոտ վերապատմել ընթերցածը,

3. գտնել բառի հոմանիշը:

Դաս 133 -  Ռ.Քիփլինգ, «Թե ինչպես գրվեց առաջին նամակը»  Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ էին որսում գետում Թեգումայը և Թաֆֆին։

2. Ի՞նչ պատահեց նրանց հետ։

3. Ո՞ր բառերից է կազմված շնաձուկ բառը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հերոսները ձուկ էին որսում։

2. Նիզակը կոտրվեց։

3. Շնաձուկը կազմված է շուն և  ձուկ բառերից։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ ներկայացնել գլխավոր հերոսներին,

2. համառոտ պատմել եղելությունը,

3. առանձնացնել բառամասերը։

Դաս 134 -  Ռ.Քիփլինգ, «Թե ինչպես գրվեց առաջին նամակը»  Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Թեգումայը և Թաֆֆին ինչպե՞ս նամակ գրեցին մայրիկին:

2. Ո՞ր տառն է բաց թողած թու-թ  և խե- դվել բառերում՝ ղ-ն, թե՞ խ-ն:

3. Տեքստում ո՞րն է հարազատ բառի հականիշը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Նրանք թղթի վրա նկարեցին:

2. Նշված բառերում բաց է թողած  ղ տառը:

3. Հարազատ բառի հականիշը օտարականն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել տեքստի կարևոր դրվագը,

2. ճիշտ գրել ղ,խ-ի ուղղագրության բառերը,

3. գտնել բառի հականիշը:

Դաս 135 - Ռ.Քիփլինգ, «Թե ինչպես գրվեց առաջին նամակը» [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ խնդրեց Թաֆֆին օտարականից:

2. Օտարականը հասկանո՞ւմ էր Թաֆֆիի լեզուն:

3. Ի՞նչ ձևով ատամով Թաֆֆին գրեց իր նկար-նամակը:

4. Ծիծաղել, քրքջալ, հռհռալ բառերը հոմանիշնե՞ր են՝ թե՞ հականիշներ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Թաֆֆին խնդրեց մայրիկին նամակ տանել:

2. Օտարականը Թաֆֆիի լեզուն չէր հասկանում:

2. Նկար-նամակը գրեց շնաձկան ատամով:

3. Ծիծաղել, քրքջալ, հռհռալ բառերը հոմանիշներ են:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել տեքստի կարևոր դրվագը,

2. համառոտ վերապատմել ընթերցածը ընդհանուր գծերով,

3. հիշել որոշ մանրամասներ բովանդակությունից,

4. տարբերել հոմանիշները:

Դաս 136 - Ռ.Քիփլինգ, «Թե ինչպես գրվեց առաջին նամակը» [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչի՞ մասին էր Թաֆֆիի նամակը:

2. Ի՞նչ հասկացավ օտարականը Թաֆֆիի նամակից:

3. Քանի՞ հոգի էր ապրում Թաֆֆիի ընտանիքում:

4. Ո՞ր տառն է բաց թողած պա-կել և հե-անալ բառերում՝ ր-ն, թե՞ ռ-ն:

5. «Հայրի՛կ, դու գրել չգիտես» նախադասության մեջ ո՞րն է կոչականը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Նամակում Թաֆֆին մայրիկից նիզակ էր ուզում՝ ձուկ որսալու համար:

2. Հասկացավ, որ նրանց դժբախտություն է պատահել, և օգնության է կանչում:

3. Թաֆֆիի ընտանիքում երեք հոգի էին:

4. Պառկել և հեռանալ բառերը գրվում են ռ-ով:

3. Կոչականը հայրիկ բառն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել տեքստի կարևոր դրվագը,

2. համառոտ պատմել եղելությունը,

3. ուշադիր ընթերցել և մտապահել կարևորը,

4. ճիշտ գրել ր-ռ-ի ուղղագրության բառերը,

5. տարբերել կոչականը:

Դաս 137 - Ռ.Քիփլինգ, «Թե ինչպես գրվեց առաջին նամակը» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Թաֆֆին ինչի՞ վրա նամակ գրեց. չէ՞ որ նրա մոտ թուղթ չկար:

2. Ինչպե՞ս վարվեցին օտարականի հետ, երբ նա հանձնեց նամակը:

3. Ինչպե՞ս ավարտվեց պատմվածքը:

4. Ո՞րն է քեզ համար ամենազվարճալի հատվածը պատմվածքում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Թաֆֆին նամակը գրեց ծառի կեղևի վրա:

2. Թաֆֆիի ցեղակիցները սկսեցին նրան ծեծել:

3. Ավարտվում է հերոսների հաշտությամբ:

4. Կարելի է տեքստի հատվածներն առանձին դիտարկել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել տեքստի կարևոր դրվագը,

2. համառոտ վերաշարադրել,

3. հիշել բովանդակային որոշ մանրամասներ,

4. առանձնացնել դուր եկած հատվածը:

Դաս 138 – Նշանավոր մարդկանց նամակները: Նամակի կառուցվածքը [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Քո կարծիքով մարդիկ ե՞րբ և ինչո՞ւ են նամակներ գրում:

2. Որո՞նք են առավոտ բառի հականիշները Հ.Թումանյանի նամակում:

3. Ովքե՞ր են պատկերված Հ. Թումանյանի ընտանեկան լուսանկարում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մարդիկ նամակ են գրում, երբ հեռու են իրարից կամ ուղղակի ասելիք ունեն միմյանց հաղորդելու:

2. Հ. Թումանյանի նամակում առավոտ բառի հականիշներն են իրիկունը և գիշերը:

3. Լուսանկարում Թումանյանի ընտանիքն է՝ կինը և տասը զավակները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. խոսել նամակի՝ որպես հաղորդակցման ձևի մասին,

2. տեքստում գտնել հականիշ բառերը,

3. լուսանկարով ճանաչել մեծերին:

Դաս 139 – Նշանավոր մարդկանց նամակները: Նամակի կառուցվածքը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Որտեղի՞ց էր Ավ. Իսահակյանը նամակ գրում որդուն:

2. Ո՞րն է ազնիվ բառի հականիշը՝ անարդա՞րը, թե՞ տգեղը:

3. Իսահակյանն ի՞նչ խորհուրդներ է տալիս որդուն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Վարպետը նամակը գրում էր Հայաստանից:

2. Ազնիվ բառի հականիշը անարդարն է:

3. Խորհուրդ էր տալիս լավ մարդ դառնալ ՝ քաջ, զարգացած, ազնիվ…:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել նամակի բովանդակությունը,

2. նշել բառի հականիշը,

3. տեքստում առանձնացնել կարևոր ասելիքը:

Դաս 140 – Նշանավոր մարդկանց նամակները: Նամակի կառուցվածքը [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ով է Չարլի Չապլինը՝ գրո՞ղ, թե՞ դերասան:

2. Նամակի հետ Չապլինն է՞լ ինչ էր ուղարկում դստերը:

3. Ի՞նչ բառամասերից է կազմվզծ անծանոթ բառը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Չարլի Չապլինը դերասան է:

2. Չապլինը նամակի հետ ուղարկում էր դրամական չեկ:

3. Անծանոթ բառը կազմված է –ան մասնիկից և ծանոթ բառից:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ճանաչել նշանավոր մարդկանց,

2. հիշել նամակի կարևոր դրվագը,

3. առանձնացնել բառամասերը:

Դաս 141 – Նշանավոր մարդկանց նամակները: Նամակի կառուցվածքը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչպե՞ս է Ջ.Լոնդոնը բնութագրում իրեն:

2. Ինչո՞ւ էր Ջ.Լոնդոնը անկողնուց նակամ գրում դստերը:

3. Երջանիկ-դժբախտ, ազնիվ-խարդախ բառերը հոմանիշնե՞ր են, թե՞ հականիշներ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ջ. Լոնդոնն իրեն համարում էր ծեր և իմաստուն:

2. Գրողը հիվանդ էր:

3. Տրված բառերը հականիշներ են:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ուշադիր ընթերցել տեքստը և մտապահել կարևորը,

2. տեքստի բովանդակությունից եզրակացություն անել,

3. տարբերել հականիշ բառերը:

Դաս 142 – Նշանավոր մարդկանց նամակները: Նամակի կառուցվածքը [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞ւմ  է ուղղված Կոմիտասի նամակը:

2. Ինչի՞ համար է ափսոսում Կոմիտասն իր նամակում:

3. Ի՞նչ էր Կոմիտասի երգչախմբի անունը:

4. Ո՞ր քաղաքների անուններն են նշված նամակում:

5. Ո՞րն է ճիշտ տարբերակը՝ Հովհանես, Հովաննես, Հովհաննես:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Նամակն ուղղված է Հ.Թումանյանին:

2. Կոմիտասն ափսոսում է Թումանյանին չտեսնելու համար:

3. Երգչախմբի անունը «Գուսան» էր:

4. Նշված են Էջմիածին, Թիֆլիս, Կ.Պոլիս քաղաքների անունները:

5. Ճիշտ տարբերակն է՝ Հովհաննես:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նշել՝ ով է նամակի հասցեատերը,

2. ուշադիր ընթերցել տեքստը և մտապահել կարևորը,

3. հիշել կարևոր դրվագը,

4. մտապահել հատուկ անունները,

5. ճիշտ գրել հատուկ անունները:

Դաս 143 – «Հայրենի անտառներ» (ըստ Մ.Ղուկասյանի) Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞ւմ կարող է կերակրել և պատսպարել անտառը:

2. Ի՞նչ բարիքներ է պարգևում անտառը:

3. Ո՞ր հնչյունն է փոխվել ջրի բառում:

4. Որո՞նք են անտառահատ բառի արմատները:

5. Ուրիշ ի՞նչ բառերով կարող ես լրացնել շարքը՝

hայրենի անտառներ, hայրենի______________, hայրենի____________________

hայրենի____________, hայրենի_______________:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Անտառը կերակրում և պատսպարում է վայրի գազաններին ու թռչուններին:

2. Անտառը պարգևում է թթվածին, փայտ և այլ բարիքներ:

3. Հնչյունափոխվել է ու ձայնավորը:

4. Տրված բառի արմատներն են՝ անտառ, հատ:

5. Շարքը կարելի է շարունակել լեռներ, ձորեր, գետեր, երկիր, հող և այլ բառերով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ ներկայացնել տեքստի բովանդակությունը,

2. տեքստի բովանդակությունից եզրակացություն անել,

3. տարբերել հնչյունափոխված բառերը,

4. որոշել բառի արմատները,

5. բառը փոխարինել նմանօրինակ այլ բառերով:

Դաս 144 - «Հայրենի անտառներ» (ըստ Մ.Ղուկասյանի) [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ ես հասկանում՝ վիրավոր ծառ ասելով:

2. Թուլանալ և ուժասպառվել բառերը հոմանիշնե՞ր են, թե՞ հականիշներ:

3. Ի՞նչ վատ հետևանքներ կարող է ունենալ անտառը ոչնչացնելը:

4. Որո՞նք են տներ, դռներ, թռչուններ բառերի եզակի թվով ձևերը:

5. Ո՞ր տարբերակներն են ճիշտ՝ օգուտ-օքուտ, պարքև-պարգև, աշխար-աշխարհ, ձյուն-ձուն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. «Վիրավոր ծառ» նշանակում է վնասված ծառ:

2. Թուլանալ և ուժասպառվել բառերը հոմանիշներ են:

3. Կպակասեն թթվածինը, վառելափայտը, շինանյութը, կվերանան շատ կենդանիներ ու բույսեր:

4. Տրված բառերի եզակի ձևերն են՝ տուն, դուռ, թռչուն:

5. Ճիշտ տարբերակներն են՝ օգուտ, պարգև, աշխարհ, ձյուն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տարբերակել բառի ուղիղ և փոխաբերական իմաստը,

2. տարբերել հոմանիշները,

3. կարդացածից եզրակացություն անել,

4. տարբերակել բառերի եզակի և հոգնակի ձևերը,

5. ճիշտ գրել բառերը:

Դաս 145 - «Հայրենի անտառներ» (ըստ Մ․Ղուկասյանի) [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչո՞ւ են թռչունները տխրում, երբ անտառում ծառ է հատվում։

2. Ի՞նչ կենդանիներ գիտես, որոնք անտառի բնակիչներ են։

3. Ինչպե՞ս կփրկես անտառը։

4. Ի՞նչը կարող է հաստաբուն լինել։

5. Ուրիշ ի՞նչ բառերով կարող ես լրացնել շարքը՝

հզոր սաղարթ, հզոր__________, հզոր___________։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Թռչունները տխրում են, որովհետև ծառերի վրա են նրանց բները։

2. Անտառի բնակիչներ են գայլերը, արջերը, աղվեսները և այլ կենդանիներ։

3. Անտառը կարելի է փրկել՝ ծառ չհատելով և ծառ տնկելով/պատասխանները կարող են լինել բազմազան/։

4. Հաստաբուն կարող է լինել ծառը։

5. Շարքը կարելի է շարունակել հայրենիք, զինվոր, երկիր և այլ բառերով։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ վերաշարադրել կարդացածը,

2. տարբերել վայրի կենդանիներին,

3. ինքնուրույն կարծիք արտահայտել,

4. առարկան ճիշտ հատկանիշով նկարագրել,

5. բառը փոխարինել նույնօրինակ այլ բառերով։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Քանի՞ միտք է արտահայտում «Իմ տունը Հայաստանն է» նախադասությունը:

2. Ի՞նչ նախադասություն կկազմես հետևյալ բառերից՝ երկիր, սիրել, ես, հայրենի, իմ:

3. Ինչպե՞ս կընդարձակես «Անձրև տեղաց» նախադասությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տրված նախադասությունն արտահայտում է մեկ միտք:

2. Կկազմվի «Ես սիրում եմ իմ հայրենի երկիրը» նախադասությունը:

3. Կարելի է ընդարձակել հորդառատ, նորից, կարճատև, կրկին և այլ բառերով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. առանձնացնել նախադասությունը՝ որպես մեկ միտք,

2. բառերի ճիշտ դասավորությամբ նախադասություն կազմել,

3. ընդարձակել պարզ համառոտ նախադասությունը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Քանի՞ առանձին միտք է արտահայտում «Իմ տունը Հայաստանն է, որովհետև ես այստեղ եմ ծնվել» նախադասությունը:

2. «Բնությունը հրաշքներ շատ ունի» նախադասությունը քանի՞ բառից է կազմված:

3. «Ես մի հսկայական ակվարիում ունեմ, որի մեջ տարբեր տեսակի ձկներ եմ պահում» նախադասությունը պա՞րզ է, թե՞ բարդ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տրված նախադասությունն արտահայտում է երկու առանձին միտք:

2. Տրված նախադասությունը կազմված է չորս բառից:

3. Տրվածը բարդ նախադասություն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. առանձնացնել նախադասությունները՝ որպես առանձին մտքեր,

2. նշել՝ քանի բառից է կազմված նախադասությունը,

3. տարբերել պարզ և բարդ նախադասությունները:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ նախադասություն կկազմես հետևյալ բառերով՝ մի, ապրում էր, մարդ, գյուղ, աշխատասեր:

2. Կարո՞ղ ես շարունակել միտքը. «Գարնանային մի տաք օր…»:

3. «Քամին փչում է, և տերևները պարելով ցած են թափվում» նախադասությունը քանի՞ պարզ նախադասությունից է կազմված:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կկազմվի «Գյուղում ապրում էր մի աշխատասեր մարդ» նախադասությունը:

2. Կարելի է շարունակել անտառ գնացինք, գյուղ մեկնեցինք և այլ մտքերով:

3. Տրված բարդ նախադասությունը կազմված է երկու պարզ նախադասությունից:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. բառերի ճիշտ դասավորությամբ կազմել նախադասություն,

2. շարունակել և ամբողջացնել միտքը,

3. առանձնացնել բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. «Երկնքում փայլեց ծիածանը», «Անձրևը դադարեց» պարզ նախադասություններով ինչպե՞ս կկազմես բարդ նախադասություն:

2. «.................., որովհետև օգնում էի մայրիկիս». ինչպե՞ս կսկսես նախադասությունը:

3. «Ձնծաղիկը գարնան առաջին ծաղիկն է» նախադասությունը պա՞րզ է, թե՞ բարդ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կկազմվի «Անձրևը դադարեց, և երկնքում փայլեց ծիածանը» բարդ նախադասությունը:

2. Կարելի է սկսել «Ես չգնացի խաղալու», «Ես չզբոսնեցի» և այլ մտքերով:

3. Տրված նախադասությունը պարզ է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. կազմել բարդ նախադասություն,

2. ամբողջացնել բարդ նախադասությունը,

3. տարբերել պարզ և բարդ նախադասությունները:

Դաս 150 - Բառ-նախադասություն [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Քանի՞ բառից է կազմված բառ-նախադասությունը:

2. Ո՞ր բառերով են բառ-նախադասություններ կազմվում:

3. Ի՞նչ բառ-նախադասությամբ կպատասխանես «Սիրո՞ւմ ես քո դպրոցը» հարցին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բառ-նախադասությունը կազմված է մեկ բառից:

2. Բառ-նախադասություններ են կազմվում այո, ոչ, հաստատ, իհարկե, բոլորովին և նմանատիպ այլ բառերով:

3. Կարող է պատասխանել՝ այո՛, ո՛չ, իհարկե, անկասկած և այլն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տարբերել բառ-նախադասությունը,

2. նշել բառ-նախադասություն կազմող բառերը,

3. կիրառել բառ-նախադասություն:

Դաս 151 - Ալիսիա Կիրակոսյան, «Նամակ առ Հայաստան» [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչո՞վ է տարբերվում Ա. Կիրակոսյանի նամակը մյուս նամակներից:

2. Ո՞ւմ է ուղղված նամակը:

3. Որտեղի՞ց է նամակ գրում բանաստեղծուհին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Նամակը գրված է բանաստեղծության տեսքով:

2. Նամակն ուղղված է Հայաստան աշխարհին:

3. Բանաստեղծուհին նամակ է գրում Բուենոս Այրես քաղաքից:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. խոսել նամակի այս ձևի մասին,

2. ուշադիր ընթերցել տեքստը և մտապահել կարևորը,

3. հասկանալ տեքստի բովանդակությունը:

Դաս 152 - Ալիսիա Կիրակոսյան, «Նամակ առ Հայաստան» [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1.Նամակը «արևներին ու լեռներին» հնարավո՞ր է կարդալ:

2. Ո՞ր հնչյունն է փոխվել ջրերդ բառում:

3. Բանաստեղծության մեջ ո՞րն է հարազատ բառի հոմանիշը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Արտահայտությունը փոխաբերական իմաստով է գործածված:

2. Տրված բառում հնչյունափոխվել է ու ձայնավորը:

3. Հարազատ բառի հոմանիշը մտերիմն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տարբերել ուղիղ և փոխաբերական իմաստները,

2. նշել հնչյունափոխված ձայնավորը,

3. տեքստում գտնել բառի հոմանիշը:

Դաս 153 - Ալիսիա Կիրակոսյան, «Նամակ առ Հայաստան» [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչո՞ւ է հեղինակը կարոտում Հայաստանը:

2. Բացի աղոթքից՝ Հայաստանում է՞լ ինչը կարող է հին լինել:

3. Ո՞ր տառն է բաց թողած զար_նել և աղո_ք բառելում՝ դ, թե՞ թ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հեղինակը կարոտում է Հայաստանից շատ հեռու լինելու պատճառով:

2. Հին են եկեղեցիները, հուշարձանները, գրքերը և այլն:

3. Տրված բառերում բաց է թողած թ տառը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. մտապահել բանաստեղծության կարևոր դրվագը,

2. ճանաչել հայրենիքը՝ որպես հնագույն երկիր,

3. ճիշտ գրել դ,թ-ի ուղղագրության բառերը:

Դաս 154 - Ալիսիա Կիրակոսյան, «Նամակ առ Հայաստան» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչո՞ւ է հեղինակը նամակ գրում Հայաստանին:

2. Ո՞րն է թուխպ բառի հոմանիշը բանաստեղծության վերջին քառատողում:

3. Ի՞նչ բառերով կնկարագրես Հայաստանը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հեղինակը նամակի միջոցով արտահայտում է հայրենիքի կարոտը:

2. Թուխպ բառի հոմանիշը ամպն է:

3. Հայաստանը կարելի է նկարագրել հնագույն, դրախտային, քարքարոտ, լեռնային, գողտրիկ և այլ բառերով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ վերաշարադրել տեքստի բովանդակությունը,

2. տեքստում գտնել բառի հոմանիշը,

3. նկարագրել հայրենի երկիրը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ է պատգամում Ս.Կապուտիկյանը որդուն։

2. Քանի՞ հնչյուն և քանի՞ տառ ունի հայերենը։

3. Հայր, պատյան, համբույր, ալյուր բառերում որո՞նք են երկհնչյունները։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բանաստեղծուհին պատգամում է մայր լեզուն չմոռանալ։

2. Հայերենն ունի 36 հնչյուն, 39 տառ։

3. Տրված բառերում երկհնչյուններն են՝ այ, յա, ույ, յու։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ վերաշարադրել բանաստեղծությունը,

2. նշել հայերենի հնչյունների ու տառերի քանակը,

3. տարբերել երկհնչյունները։

Դաս 156 – Կրկնություն(է-ե-ի ուղղագրությունը) Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Հարուստ բառի ի՞նչ հականիշներ գիտես:

2. Ո՞ր տառն է բաց թողած վայր_ջք, առ_ջ, ան_անալ բառերում՝ է, թե՞ ե:

3. Ի՞նչ բառամասերից է կազմված մեծատուն բառը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հարուստ բառի հականիշներն են՝ աղքատ, թշվառ, ընչազուրկ:

2. Բաց է թողած է տառը:

3. Մեծատունը կազմված է մեծ, տուն բառերից:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տարբերել հոմանիշ և հականիշ բառերը,

2. ճիշտ գրել է,ե-ի ուղղագրության բառերը,

3. առանձնացնել բառամասերը:

Դաս 157 – Կրկնություն(օ-ո-ի ուղղագրությունը) Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞րն է կեսօր, նախօրե, ամենօրյա, հնօրյա բառերի ընդհանուր արմատը:

2. Ի՞նչ գործով էր զբաղվում այգեպան Մոսին:

3. Այգեպան Մոսին ազնի՞վ մարդ էր, թե՞ խարդախ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տրված բառերի ընդհանուր արմատը օրն է:

2. Մոսին այգիներ էր տնկում և ծաղկեցնում:

3. Այգեպանն ազնիվ մարդ էր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. գտնել բառերի ընդհանուր արմատը,

2. հիշել տեքստի բովանդակությունը,

3. բնութագրել ստեղծագործության հերոսին:

Դաս 158 – Անդրադարձ «Եղեգնուհին» հեքիաթին Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչպե՞ս ավարտվեց «Եղեգնուհին» հեքիաթը:

2. Ինչպիսի՞ն էր Եղեգնուհին:

3. Ի՞նչ է նշանակում աչք ու ականջ դառնալ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հեքիաթն ավարտվեց բարու հաղթանակով(Եղեգնուհուն տարան պալատ, իսկ խափշիկին պատժեցին):

2. Եղեգնուհին գեղեցիկ էր, մաքրասեր, աշխատասեր:

3. Տրված դարձվածքը նշանակում է ուշադրությունը լարել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. պատմել հեքիաթի վերջաբանը,

2. նկարագրել հեքիաթի հերոսուհուն,

3. տարբերել ուղիղ և փոխաբերական իմաստները:

Դաս 159 – Կրկնություն(ը-ի ուղղագրությունը) [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. «Խոսող ձուկը» հեքիաթում ո՞վ է ազատ արձակում ձկանը՝ ձկնո՞րսը, թե՞ շալակտարը:

2. Ո՞ր բառերն են սխալ գրված՝ օրըստօրե, անակընկալ, գործընկեր, լուսընկա:

3. Հնարավո՞ր է լավությունը ջուրը գցել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ձկանն ազատ է արձակում շալակտարը:

2. Սխալ են գրված անակնկալ և լուսնկա բառերը:

3. Լավությունը ջուրը գցելը փոխաբերական իմաստ ունի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել հեքիաթի հերոսներին և կարևոր դրվագը,

2. ճիշտ գրել ը-ի ուղղագրության բառերը,

3. տարբերել ուղիղ և փոխաբերական իմաստները:

Դաս 160 – Կրկնություն(բ-փ-ի ուղղագրությունը) Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. «Սոխակը» հեքիաթում կայսրը ինչի՞ց առողջացավ:

2. Քանի՞ սոխակ կար կայսեր պալատում:

3. Ո՞ր տառն է բաց թողած ուր_աթ և շա_աթ բառերում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կայսրը առողջացավ իսկական սոխակի երգից:

2. Պալատում երկու սոխակ կար՝ արհեստական և իսկական:

3. Տրված բառերում բաց է թողած բ տառը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. խոսել հեքիաթի ավարտի մասին,

2. մտապահել հեքիաթի կարևոր դրվագը,

3. ճիշտ գրել բ,փ-ի ուղղագրության համագործածական բառերը,

Դաս 161 – Կրկնություն(դ-թ-ի ուղղագրությունը) Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչե՞ր էր արդուկում մարդուկը:

2. Եթե այդպիսի արդուկ ունենայիր, ի՞նչը կարդուկեիր երկրի վրա:

3. Ինչպե՞ս են գրվում Վար_ան և Նվար_ անունները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մարդուկն արդուկում էր գետերը, սարերը, լեռները …:

2. Կարելի է արդուկել, օրինակ, անարդար երևույթները (պատասխանները բազմազան կլինեն):

3. Նշված անունները գրվում են դ-ով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել բովանդակությունը,

2. ճիշտ գրել հատուկ անունները,

3. տեքստի բովանդակությունից տարբերվող առաջարկներ անել:

Դաս 162 – Անդրադարձ անցած հեքիաթներին Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչո՞ւ էին Նուկիմ քաղաքի խելոքները թագավորի մոտ գնում:

2. Ո՞րն է քո սիրած խորհուրդը «Երեք խորհուրդ» պատմվածքում:

3. Ո՞րն է ճիշտը՝ հետմիջօրե, հետմիջօրէ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Գնում էին ասելու, թե մրսում են և երկու ամառ, մեկ ձմեռ են ուզում:

2. Կարող է խորհուրդներից մեկը առանձնացնել որպես իր համար ամենակարևորը:

3. Ճիշտ տարբերակն է՝ հետմիջօրե:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ վերաշարադրել հեքիաթի բովանդակությունը,

2. ընտրել խորհուրդներից մեկը,

3. ճիշտ գրել է,ե-ի ուղղագրության բառերը:

Դաս 163 – Անդրադարձ «Աստղամանուկը» հեքիաթին    Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Որտեղի՞ց էին գտել Աստղամանուկին:

2. Աստղամանուկը  փոխե՞ց  իր վատ բնավորությունը:

3. Քեզ դո՞ւր եկավ հեքիաթի ավարտը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Աստղամանուկին գտել էին անտառից:

2. Նա փոխեց իր վատ բնավորությունը:

3. Կարող է դուր գալ, կարող է և դուր չգալ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել հեքիաթի բովանդակությունը,

2. վերարտադրել կարդացածը,

3. ազատ ու ինքնուրույն կարծիք հայտնել:

Դաս 164 – Կրկնություն(ղ-խ-ի ուղղագրությունը) Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ ստեղծագործություններ են գրել Վ.Այգեկցին և Մ.Գոշը։

2. Կենդանիները և բույսերը կարո՞ղ են խոսել առակներում։

3. Ո՞ր տառերն են բաց թողած՝

ա. ու_տապան, ու_տատեր

բ. ու_տաղրուժ, ու_տատեղի

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Վ.Այգեկցին և Մ.Գոշը գրել են առակներ։

2. Կենդանիներն ու բույսերը կարող են խոսել՝ դառնալով առակների հերոսներ։

3. Ա. շարքի բառերը գրվում են ղ-ով, բ. շարքինը՝ խ-ով։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ճանաչել հայ նշանավոր առակագիրներին,

2. ասել՝ կենդանիներն ու բույսերը երբ կարող են խոսել,

3. Ճիշտ գրել ղ,խ-ի ուղղագրության բառերը։

Դաս 165 – Անդրադարձ անցած առակներին Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞վ է «Մարգարիտն ու փրփուրը» և «Գարնանամուտ» ստեղծագործությունների հեղինակը:

2. Ինչպիսի՞ն է «մարգարիտ» մարդը:

3. Ըստ Ավ. Իսահակյանի առակի՝ ի՞նչը կարող է կյանքից թանկ լինել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Առակի և բանաստեղծության հեղինակը Հ.Շիրազն է:

2. «Մարգարիտը» համեստ, ազնիվ, խոհեմ մարդն է:

3. Կյանքից թանկ կարող է լինել ազատությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ճանաչել տրված ստեղծագործությունների հեղինակին,

2. ընկալել առակի բարոյախրատական ասելիքը,

3. համառոտ վերարտադրել առակի բովանդակությունը:

Դաս 166 - Անդրադարձ անցած առակներին [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Հիշելով Ի.Կռիլովի առակը՝ կարո՞ղ ես ասել, թե ծառի որ մասն է ավելի կարևոր:

2. Ջեփյուռը փոթորի՞կն է, թե՞ մեղմ քամին:

3. Ի՞նչ բառամասերից է կազմված գանգրահեր բառը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ծառի բոլոր մասերն էլ կարևոր են, բայց առանց արմատների ծառը ուղղակի լինել չի կարող:

2. Ջեփյուռը մեղմ քամին է:

3. Գանգրահեր բառը կազմված է գանգուր, հեր բառերից:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ընթերցածի հիման վրա ինքնուրույն դատողություն անել,

2. տարբերել հոմանիշ բառերի իմաստային նրբերանգները,

3. առանձնացնել բառամասերը:

Դաս 167 -  Կրկնություն [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչպե՞ս ծնվեց կայծակի ու քաջության աստված Վահագնը։

2. Ինչպիսի՞ տեսք ուներ Վահագնը։

3. Բառակապակցություններից որո՞նք ունեն փոխաբերական իմաստ.

ա. կարճ մորուք, բոց մորուք,

բ.  հուր հեր(մազ), երկար հեր։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Երկնում էին երկինքն ու երկիրը, ծիրանի ծովն ու կարմիր եղեգնիկը, և ծնվեց Վահագնը։

2. Վահագնը խարտյաշ էր, հուր մազերով, բոց մորուքով և արեգակի նմանվող աչքերով։

3. Փոխաբերական իմաստ ունեն բոց մորուք և հուր հեր բառակապակցությունները։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. շարադրել բանաստեղծության բովանդակությունը,

2. նկարագրել բանաստեղծության հերոսին,

3.  տարբերել ուղիղ և փոխաբերական իմաստները։

Դաս 168 - Կրկնություն [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1.«Երազ »բանաստեղծության մեջ ո՞ւմ ձայնն է լսում բանաստեղծը:

2. Ո՞րն է քո երազը՝ Հայաստան աշխարհի հետ կապված:

3. Որևէ, ինչևէ, գրեթե բառերի շեշտը ո՞ր ձայնավորի վրա է դրվում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բանաստեղծը լսում է մոր ձայնը:

2. Երազը պետք է լինի լավատեսական:

3. Տրված բառերում շեշտը դրվում է առաջին վանկի ձայնավորի վրա:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. շարադրել բանաստեղծության բովանդակությունը,

2. ինքնուրույն մտածել և տեսակետ հայտնել,

3. ճիշտ շեշտադրել բառերը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1.Վ.Տերյանի քեզ արդեն ծանոթ բանաստեղծությունը տարվա ո՞ր եղանակի մասին է:

2. Ինչո՞վ են իրարից տարբերվում աշունն ու գարունը:

3. Այսօր մարդիկ ինչպե՞ս են նամակներ գրում իրար:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տերյանի բանաստեղծությունը աշնան մասին է:

2. Գարնանը բնությունը զարթնում է, իսկ աշնանը՝ ննջում:

3. Այսօր մարդիկ գրում են էլեկտրոնային նամակներ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ ներկայացնել բանաստեղծության բովանդակությունը,

2. նկարագրել տարվա եղանակները՝ նշելով առանձնահատկությունները,

3. խոսել նամակագրության ժամանակակից եղանակի մասին: